



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՆՈՐԱՅՐ ԳՐԱՍՅՆ



Handwritten Armenian text in two columns, including a large red initial 'Վ' and various lines of script.

ՆՅ ՀՆՆՏԻՊ ԻՔԵՐԻ
ՉԵՌԵԳԻՐ
ՀԻՇՆՏԵԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(1512-1712)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԵԼՍԵՐԵՆ

ՀՏԲ
ԴՊՔ
ԴՊԸ
ԴՊԹ

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅ ՀՆԱՏԻՊ ԳՐԹԵՐԻ
ՉԵՌԱԳԻՐ
ՀԻՇՆԱՏԵԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(1512-1712)



ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2012

ՀՏԴ 09
ԳՄԴ 76.11
Պ 797

Հրատարակության և երաշխավորել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
խորհուրդը

Նվերական
Հայ գրադարան-թանկ
500-ամյա Հոբելյանին

ՊՈՂՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ

Պ 797 Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակագրություններ
(1512-1572). – Երևան, ԵՊՀ հրատ., 2012, 88 էջ:

Հայ հնատիպ գրքերից շատերի գնողները, նվիրաբերողները
և այլ անձինք գրքերի էջերին թողել են ձեռագիր բազմաբովան-
դակ գրություններ: Դրանք նման են ձեռագիր մատյանների հիշա-
տակագրություններին, սակայն ունեն նաև որոշակի յուրահատ-
կություններ: Ներկա աշխատությունը ձեռագիր այդ հիշատա-
կագրությունները հավաքելու և քննելու մի փորձ է:

Ներկայացված են հնատիպ տասնյակ գրքերից քաղված
մոտ 150 հիշատակագրություններ:

ՀՏԴ 09
ԳՄԴ 76.11

ISBN 978-5-8084-1551-5

© Պողոսյան Ն. Բ., 2012
© ԵՊՀ հրատ., 2012

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

-Ա-

Հայերեն հնատիպ գրքերից շատերի հեղինակները, հրատարակիչները, թարգմանիչները կամ մեկեմասները գրքերի էջերին, հիմնական բովանդակությունից դուրս, թողել են տպագիր հիշատակարաններ: Դրանք բնագրեր են, որոնք պարունակում են հայերեն հնատիպ գրքի տպագրման հանգամանքների, հրատարակիչների, թարգմանիչների մասին և այլ կարգի պատմական փաստեր: Այդպիսի մի փոքր հիշատակի հանդիպում ենք արդեն 1513 թ. «Պատարագատետրում», որի 6-րդ մամուլի 7-րդ էջում առկա է հետևյալ հանրահայտ հիշատակագրությունը. «Գրեցաւ ս[ուր]բ տառս ի ՋԿԲ ա[ստուա]ծապահ քաղաքս ի Վենեժ, որ է Վենետիկ Ֆռանկստեան. ձեռամբ մեղապարտ Յակոբին. ով որ կարդայք մեղաց թողոթի[ւն] խնդրեցէք Ա[ստուծո]յ»:

1513 թ. մեկ ուրիշ գրքի՝ «Աղթարք»-ի վերջում հետևյալ փոքր հիշատակագրությունն է. «Գիրքս բովանդակ ԻԴ տետր է, և ամեն տետր Ը թուխք է»¹:

Ավելի ուշ՝ 1565 թ. Աբգար Թոխաբեցու տպագրած «Տօմար» գրքի տպագիր հիշատակարանը ժամանակի խոսակցական լեզվի մի արտացոլանք է ներկայացնում. «Թվին ՌԺԴ շինեցօ նոր գիրս հայոց և այս խառնայ փնտուրս ի Վանատիկ ձեռամբ Թոխաստցի Սաֆար Աբգարին. այս գրչայ/ւայն է նոր գրիս վասն լուսնին. շատ չի գրեցաք զի չէր մեկնիլ ի թու/ռոս»:

¹ Նույն հիշատակագրությունը Գարեգին Ջարբհանայանն այլ կերպ է ընթերցել՝ «Գիրքս բովանդակ ամենն տետր է: Եւ ամեն տետր ուխթ է». տե՛ս Գ. Ջարբհանայան, *Հայկական մատենագիտություն*, Վենետիկ, 1883, էջ 20:

Հնատիպ գրքի տպագիր հիշատակարանները բնութագրելու և լեզվական տեսակետից քննելու առիթ ունեցել ենք²: Բերած այս երեք հիշատակարաններից անգամ նկատելի է, որ դրանք հայերենի վաղաշխարհաբարյան շրջանի լեզվական հարազատ բնագրեր են, որոնք մեր լեզվի շրջանաբաժանման կարևոր մի փուլում ի հայտ գալու շնորհիվ լեզվական ուսումնասիրման համար առանձնակի կարևորություն են ստանում:

Ասվածն ամբողջությամբ վերաբերում է նաև հնատիպ գրքի էջերին սփռված **ձեռագիր հիշատակագրություններին**, այն ձեռագիր գրություններին ու պատառիկներին, որոնք թողել են մեր առաջին գրքերը նվիրողները, ստացողները, նորոգողները, գնողները, պահպանողները և այլ անձինք: Նախ ասենք, որ հիշատակարան և հիշատակագրություն տերմինները գործածում ենք հայագիտության մեջ վաղուց ընդունված իմաստներով³: Հիշատակարանը (նաև հիշատակագրությունը) «ձեռագիրների և հին տպագրութիւնների վերջում արտագրողի կամ տպագրողի կողմից արված համառոտ գրութիւնն է, որ վերաբերում է գրութեան կամ տպագրութեան ժամանակին, տեղին, հանգամանքներին» (**Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան**):

Հնատիպ գրքի հիշատակարանները և ձեռագիր հիշատակագրություններն իրենց, եթե կարելի է ասել՝ ժանրային առումով գրեթե չեն զանազանվում ձեռագիր մատյանների հիշատակարաններից ու հիշատակագրություններից: Եական տարբերությունը միայն այն է, որ գրքերում **տպագրված** հիշատակարանների բովանդակությունն առնչվում է տվյալ գրքի տպագրման, հեղինակի անձի, ժամանակի և այլ հանգամանքներին, իսկ նույն գրքերի տարբեր էջերին տարբեր անձանց կողմից թողած **ձեռագիր** հիշատակությունները, ինչպես քննության ընթացքն էլ ցույց կտա, պատմում են գիրքը գնելու, պահելու, նվիրելու և այլ հարակից՝ գրքի բուն բովանդակության հետ անմիջականորեն կապ չունեցող իրողությունների մասին:

² Տե՛ս Նորայր Պողոսյան, 16-17-րդ դարերի հայերեն հնատիպ գրքի հիշատակարանների լեզուն, Բանբեր Երևանի համալսարանի, 2011, թիվ 133.2, էջ 22-31:

³ 17-րդ դարի հայերեն տպագիր գրքերում մի քանի անգամ հանդիպում է **հիշագրություն** նորաբառը, որը, կարծում ենք, արտահայտում է մեր մատնանշած գրությունների բովանդակությունը: Սակայն ներկա աշխատանքում այնուամենայնիվ պահպանում ենք **հիշատակագրությունը** հարազատ մնալով հայագիտության մեջ արմատացած տերմինին:

Հնատիպ գրքի ձեռագիր հիշատակագրությունները յուրաքանչյուր առանձին գրքի կենսագրության ուրույն վկայարաններ են:

Եվ այսպես՝ ի՞նչ են իրենցից ներկայացնում 16-17-րդ դարերում տպագրված հայերեն գրքերում հանդիպող հիշատակագրությունները, բովանդակային ինչպիսի՞ ուղղվածություն ունեն, լեզվական ի՞նչ որակ են ներկայացնում այդ հիշատակագրությունները և ի՞նչ նպաստ կարող են բերել մեր լեզվի պատմությանը, հատկապես՝ վաղ աշխարհաբարի ձևավորման ընթացքը պարզաբանելու համար:

-Բ-

Ձեռագիր հիշատակագրությունների տեսակները՝ ըստ բովանդակային ուղղվածության: Նախ ասենք, որ դիտարկել ենք մոտ 200 տարվա ժամանակաշրջան (1512-1712 թթ.) ընդգրկող տպագիր գրքերում հանդիպող ձեռագիր հիշատակագրությունները: Նշված ժամանակաշրջանը, իհարկե, ընտրված է պայմանականորեն, սակայն կարող է պատկերացում տալ հիշատակագրությունների մասին, այն նաև համընկնում է մեր լեզվի՝ միջին հայերենյան փուլից վաղ աշխարհաբարի անցման շրջանին, ուստի լեզվի զարգացման տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Ներկա գրքույկում գրանցված հիշատակագրությունների մեծ մասը գրի է առնվել 17-18-րդ դարերում⁴: Խոսքը վերաբերում է ստույգ թվական պարունակող հիշատակագրություններին: 19-րդ և մանավանդ 20-րդ դարասկզբի գրված հիշատակագրությունները հիմնականում շրջանցել ենք, ներկայացնում ենք միայն այդ դարերի՝ մեր կարծիքով առավել ուշագրավ գրությունները⁵: Տպագրման թվականին ժամանակով ամենամոտը Մարտելի 1673 թ. «Պարգատօմարում» հանդիպող հիշատակագրությունն է, որը գրվել է գրքի տպագրումից երկու տարի անց՝ 1675 թվականին:

⁴ Մեր քարտագրած գրքերի տպագրման թվականի և այդ գրքերում պահպանված հիշատակագրությունների թվականների համապատասխանությունը տես **Հավելվածում**, էջ 78:

⁵ Ուշ շրջանի՝ 19-20-րդ դարերի թվակիր հիշատակագրություններից մի քանիսն ենք միայն ընդգրկել մեր քննության մեջ, օրինակ՝ 1666 թ. Ամստերդամի Ոսկանյան «Աստուածաշնչի» ՄՄ 900-ի տիտղ. պահպանակին, որը էջով մեկ, **Հովհաննես Թումանյանի** ինքնագիր հետևյալ գրությունն է. «*Իր սիրելի Մեսրոպ եպիսկոպոսին, մտերմութեան յիշատակ: Յովհ. Թումանեան: 1915, Յունիսի 27, Թիֆլիզ*»:

Մեր կողմից դիտարկվել են Երևանի Մաշտոցյան Մատենադարանում (ՄՄ), Ազգային գրադարանի հնատիպ գրքի բաժնում (Ազգ. գրադ.), Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) և Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) հնատիպ և հազվագյուտ գրքերի բաժիններում պահվող՝ նշված ժամանակաշրջանում հրատարակված ընդհանուր հաշվով մոտ 50 գրքեր: Ավելի ստույգ՝ մոտ 50 գրքերում են մեզ պատահել ձեռագիր հիշ.-եր, իսկ շատուշատ գրքեր պարզապես զուրկ են նման գրավոր միջամտություններից:

Իրենց բովանդակային ուղղվածությամբ ձեռագիր հիշատակագրությունները կարելի է բաժանել մի քանի հիմնական տարատեսակների:

ա) Նվիրատվությունների վերաբերյալ հիշատակագրություններ:

Այս գրությունները եկեղեցուն, նրա սպասավորներին տրված ընծաների մասին հիշատումներ են: Նման ծանուցումներ գրատվում են այդ նվերները ստացողների կողմից, օրինակ՝ 1565-1566 թթ. Վենետիկի Սաղմոսարանի ՄՄ 1317 օրինակից, էջ 53. «Ա[ստուա]ծ ողորմի Գոգե հոգուն, Գիլանին հոգուն, Ա ոչխար տվա»: Նույն գրքի մեկ այլ՝ 182-րդ էջին նույն ձեռագրով գրված է. «Ա[ստուա]ծ ողորմի Կիրակոսին, Խոցայդեղին, ետուն Ա մոզի ավաց (°)»: Մեկ ուրիշ էջին՝ «Ա[ստուա]ծ ողորմի Էրբիանոսին հոգուն, Ա մոզի տվաց»:

1676 թ. Մաշտոցի ՄՄ 1931 օրինակի կազմի դարձերեսին գրված է՝ «Վելիխանն որ զարդար ցորեն տվեց...»: Նույն գրքի էջ 9-ին՝ «Գալդ տավ գոմէջ»:

1685 թ. Վենետիկի Ավետարանի ԵՊՀ Ա-79 օրինակի վերջին ազատ էջին մանր կանոնավոր ձեռագրով գրված է. «Յիշ[ա]տ[ա]յկ է ս[ուր]բ Աւետարանս Արտամետոցի Սահակին, որ էառ իւր վաստակօք, ետ ի դուռն Յայնկոյսներաց տ[ի]ր[ա]մ[ա]յր Ս[ուր]բ Ա[ստուա]ծածնին անջինջ յիշ[ա]տ[ա]յկ...»:

բ) Ուղղումներ տպագիր գրքի այս կամ այն էջին, այս կամ այն տողի կողքին: 1587թ. Վենետիկի Սաղմոսարանի (ՄՄ 1318) էջ 79-ին սև մեկանով գրողը ջնջել է գրքի շարվածքի «բ[ա]զ[ու]մ էին որ տրտընչին ընդ իս ի բ[ա]րձ[ա]նց» տողը և դրա փոխարեն ավելացրել՝ «բ[ա]զում էին ոյք ատէին զիս ի տարայարտուց» (Մաղմ. ԼԷ 20): Նմանատիպ շտկումներ կան մահ գրքի նույն օրինակի 200, 233, 234, 338 էջերին:

Ուղղումները տարբեր բովանդակություն ունեն: 1660-1661 թթ. «Յիսուս Որդու» ԳԱԱ օրինակի էջ 378-ին սև մեկանով, ոչ վարժ ձեռագրով գրիչը ուղղել է գրքի բնագրի մեկ բառը, որ բերևա այլ աղբյուրից է բաղել կամ անգիր է իմացել, քանի որ միայն ընթերցելով դժվար կլիներ նկատել բնագրային ոչ ակնառու այդ տարբերությունը: Գրքում եղել է.

«Որպես ասաց ինքըն նախկին / գնօղ և առօղ մարմնոյն **յայտնի...**

Գրողը լուսանցքում ուղղել է.

«Որպես ասաց ինքըն նախկին / Գնօղ և առօղ մարմնոյն **յատին**»:

1698 թ. Ամստերդամի Շարակնոցի Ազգ. գրադ. 1629 օրինակի էջ 265-ին գրիչը կանոնավոր նոտագրով միջամտել է այսպես. «Ծագումըն միածնի Որդոյ քո յերկնից անըսկիզբն անեղ» հատվածը սև մեկանով ջնջված է և դրա վերևի մասում գրված. «Ծագեցեալն ի քէն միածին Որդի քո, ո՛վ Հայր, անըսկիզբն անեղ»:

3.Շրջողների «Արամեան լեզուին գանձ» (Կ.Պոլիս, 1711) ԳԱԱ օրինակի բազմաթիվ էջերին, մանավանդ քերականության բաժիններում գրիչը, ով գրաբարի ու քերականության գիտակ է եղել, շագանակագույն մեկանով, կանոնավոր ձեռագրով միջամտություններ է արել: Հնարավոր է՝ նույնիսկ ուսուցանելու ընթացքում է գրքում հավելումներ կատարել: Այսպես. **մարդիկ** բառի կողքին, որպես զուգահեռ ձև, ավելացվել է՝ **մարդիկք**, ու հոլովման պատկանող բառերի մոտ՝ լուսանցքում ավելացվել է **Յորդանան** բառը, **էկաց**-ին զուգահեռ՝ **էկաց, էբաց, էբաց, էթող էթող**: Նախադրությունների մոտ հավելել է **ըզկնի, ըզհետ**: Ուշագրավ է, որ նման հավելումների մոտ միշտ տրված են բնագրային վկայակոչումներ Հովհաննու Ավետարանից: Օրինակ՝ հարցանել - «զոս հարցեք» և հղված է Յովհ. 9.21, «որոց տեսեալ էր զնա յառաջագոյն» (Յովհ. 9.8), «Զօտարի զհետ ոչ երթիցեն» (Յովհ. 10.5):

Հիշատակագրությունների այս տարատեսակի խիստ բնորոշ մի օրինակ է Հովհ. Կոստանդնուպոլսեցու «Հայելի ճշմարտութեան» (Վենետիկ, 1680) գրքի ԳԱԱ օրինակի 28-րդ էջին գրիչի կատարած խիստ միջամտությունը: Գրքի այն պարբերությանը կից, ուր գրված է՝ «...զգուշ լերութ յայնցանէ, ո՛վ հռոմայեցիք, որք զայլ իմն հաւատ, բաց յայնման, զոր մեք քարոզեցաք ձեզ ուսուցանեն», ահա տպագիր այս հատվածին կից ուղղահայաց տողով, սև, փոքր ձեռագրով գրված է. «Այ հայելի ստուբե[ան], էս գրում աս չում խե/տլածն և արունն ուտում աս...» (շարունակությունը կտրվել է թղթի հետ, տե՛ս լուսապատճեն 6):

գ) **Աղոթքներ, բարեմաղթանքներ, ծոցներ:** 1565-1566 թթ. Վենետիկի Սաղմոսարանի ՄՄ 1317 օրինակի էջ 319-ին, սև մեկանով ու վարժ ձեռագրով գրված է. «Խաղաղութե[ան]ց տուաղ Ք[րիստո]ս, զխաղաղութի[ւն] և գերկնային ողորմութի[ւն]ք պարգևեայ յարարածս քո»:

Ներսես Շնորհալու 1643 թ. Վենետիկում տպագրված «Յիսուս Որդու» ՄՄ 121 քվահամար օրինակի ՇԻ էջին, սև մեկանով ձեռագիրը հավելել է. «Աստ քեզ գոչիմ աղերսալի, լե՛ր բարեխօս Մ[ուր]ք Տիրուհի գերագարդ և ցնձալի, գերագոյի և բաղձալի, Աստուածածին ս[ուր]բ անարատ, գրեզ աղաչեմ կոյս Տիրամայր»:

1713 թ. Հովհաննես Մրգուզի «Կրթութիւն հաւատոյ» գրքի (Կ. Պոլիս) ԳԱԱ օրինակի էջ 1-7-ին երկար աղօթք է գրված հետևյալ սկիզբով. «Աղօթք և պաղատանք առ Մ[ուր]ք Խաչն աստուածընկալ. Աղաչեմ տ[ե]ր և անճանիմ յ[ա]ռ[ա]ջի սրբոյ նշանի քո, բարեխօսութեամբ սորա զպաղատա]նս իմ ընկալ և զխնդրածս իմ կատարեայ. և զօրութեամբ ս[ո]րա զօրացոյ զիս, տ[ե]ր, ի կոչումս, յոր կոչեցայ. և ի պատիրանս քո, զոր յուսա[յ]: Տուր ինձ զսա ի զօրութի[ւն] և ի ժուժկ[ա]լութի[ւն], յ[ա]ռողջութի[ւն] և ի զգաստութի[ւն]. և պահապ[ա]ն անձին իմոյ...»: Այսպիսի բազմաթիվ այլ աղոթքների նույնպես կարելի է հանդիպել հնատիպ գրքերի էջերին:

դ) **Գրիչների և նրանց հարազատների հիշատակում:** Օրինակ՝ 1587 թ. Վենետիկի Սաղմոսարանի (ՄՄ 1318) էջ 146-147. «Յիշատակ է Սաղմոսարանս Տ[ե]ր Վարդանին, իր կողակից Ազիզին, իր որդոյն Ալեքսանոսին, Սալմինագին. ամեն»: 1641թ. Նոր Ջողայի «Հարանց վարքի» (ՄՄ 1332) կազմի դարձերեսին. «Յիշե[ց]էք եղկելի Հովանես Աբեղայս Աստուած է զձեզ յիշէ ի մշտանգամ զալխտան իրոյ. ամեն. եղիցի, եղիցի»:

Ներսես Շնորհալու 1643 թ. Վենետիկում տպագրված «Յիսուս Որդու» ԳԱԱ օրինակի էջ 3Լ-ին սև քանաքով կանոնավոր ձեռագրով գրված է. «Տ[ե]ր Յ[իսու]ս, բարի վայելումն տացես Աղայեցի Ըղբստամի որդի յոյժ մեղսասեր տառ[ա]յե[ա]լ Ռսկանիս: Գր[ե]ց[ա]լ Ռ-ՃԿԸ (=1719) թվին, նամսեանն մայիսի Ը»:

Մեկ այլ նմուշ. 1667 թ. Ամստերդամի «Վարդապետութիւն քրիստոնեական ըստ Հայոց» գրքի ԵՊՀ Վ-30 օրինակի 3-րդ էջին գրված է. «Յիշեցէք ի մաքրափայլ յ[ա]ղ[օ]քս ձեր զի մեղօք զանարժան Գալուստ վարդ[ա]յ[ե]տն, ո՛վ հայեցող այսմ տետրիս, ողորմի ասես, որ և

Ա[ստուա]ծ քեզ ողորմի աստ մարմնով, հանդերձե[ա]յն՝ հոգով. ամեն: Թվ[ի]ն Ռ-ՃԽԶ» (=1697):

ե) Գիրքը գնելու, նվիրելու մասին հիշատակագրություններ. Ներսես Շնորհալու՝ 1643 թ. Վենետիկում տպագրված «Յիսուս Որդու» ԳԱԱ օրինակի էջ ՆԻԱ և ՇԻ, նույն ձեռագրով երկու տարբեր հիշատակագրություններ կան. «Առե[ա]յլ եղև Ըստամբօլ Ռ-ՃԿԷ (1718) քվին մարտի մէկ ի վայելումն [---]», «Առե[ա]յլ եղև Ռ-ՃՀ (1721) քվին և ապրէլի Ի ի վայելումն տ[ա]ռ[ա]յե[ա]յլ Վիրապիւն»:

1645 թ. Հռոմում տպագրված Կղեմես Գալանոսի «Քերական և տրամաբանական ներածութիւն» գրքի ՄՄ 206 օրինակի 444-րդ էջին գրված է. «Ես՝ Համադանցի Էսկանդարի որդի Խաչատուրէս գնեցի քաղա/էս Բաղդաս, որ Բաբելյօն գոչէ, քի[ի]ն Ռ-ՃԿԶ, յունիսի Դ-ումն»:

1685թ. Վենետիկյան Ավետարանի Ազգ. գրադ 615 քվախամար օրինակի չհամարակալված (չհ.) էջ 433-ին շազանակագույն մեկանով, լավ ընթերնելի գրված է. «Յիշատակ է ս[ուր]բ Աւետարանս վանքեցի Պողոսին, Մարքարիտին, Աղամին, Միրզին և այլ իւր ննջեցեղոցն Ա[ստուա]ծ ողորմի, տվին Հալիձորա եկեղեցին, Ա[ստուա]ծ իրեաց հոգին լուսա/րէ, արդարոց դասն դասեսցէ. ես անարժան տ[է]ր Նազարէթս գրեցի...»:

«Ի քվին Ռ-ՃԶ (=1731) ես՝ տէր Դանիէլ վարդապետ քահ[ա]յն[ա]յ օրհնեցայ և գայս գիրքս առի ի մայրաքաղաքին Բիզանդիոյ ի վայելումն ինձ և իմայնոց...», գրում է Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցի» (Լիվոռնո, 1698) ԳԱԱ 3222 օրինակի հիշատակագրողը:

զ) Պատմական տարբեր փաստերի, իրադարձությունների հիշատակում, որ ժամանակին անշուշտ մեծ արձագանք են ստացել: 1673թ. Մարսելում տպագրված «Պարգատօմարի» Ազգ. գրադ. 228 գրքի էջ 67-ին սև մեկանով, պարզ ձեռագրով հիշատակագրված է. «Թվ[ի]ն Ռ-ՃԻԴ (=1675) ի յունվարի Ի-է արըն կիրակի. նստաւ չախտ սուլթան Մուստաֆայն»:

Հովհաննես Կոստանդնուպոլսեցու «Պարգաբանութիւն հոգեմտագ Մաղմտացն Դարի» (Վենետիկ, 1687 թ.) գրքի ՄՄ 1589 քվախամար օրինակի 4-րդ էջին դժվարընթերնելի փոքր ձեռագրով գրված է. «Ի ծընունդն Ստեփանոսին, որ է որդի Գրիգորին, Ռ-ՃԴ(°)Գ (=1744°) քվին և յունիսի Ժ և մէկին աւուրն հոգեգալուստ Բ շաբաթին ի ժամանակըս չայրապետին Էջմիածնայ ս[ուր]բ Աբրոնին սրբազան Ղազար կաթողիկոսի:

Ի քազա/օրութեան Վէլինամադին, որ մահ արա/ յերկիրըս մինչև Գ տարին. Ա[ստուա]ծ յերկ[ա]ր կեանըս պարջևէ Վէլինամադին [---] նորածին մանգանն Ըտտեփանոսին. ամեն»:

Գժվար է ասել, թե ձեռագիր հիշատակարանների նշված տարատեսակներից որոնք են առավել շատ հանդիպում, քանի որ մեր քաղած հիշատակագրությունները լիարժեք չեն կարող լինել հենց թեկուզ այն պատճառով, որ ձեռագիր հիշատակագրություններ պարունակող հնատիպ գրքի ոչ բոլոր օրինակներն են մեր ձեռքն ընկել: Իսկ մեր քարտագրած հիշատակագրություններում առաջին հայացքից գերակշռում է չորրորդ տարատեսակը՝ այս կամ այն անձի, նրա հարազատների հիշատակություններն ու նրանց ուղղված բարեմաղթանքները:

Հասկանալի է, որ նշված տարատեսակների սահմանազատումը պայմանական է, և դրանց սահմաններն ընդհանուր առմամբ են պահպանվում: Շատ հաճախ դրանք միախառն են ներկայանում, միևնույն գրության մեջ կարող է և՛ պատմական դեպք հիշատակվել, և՛ բարեմաղթանք հղվել այս կամ անձին, և՛ հեղինակին հիշելու խնդրանք պարունակել և այլն: Օրինակ՝ Ներսես Շնորհալու Վենետիկյան 1660 թ. «Յիսուս Որդու» ԳԱՍ օրինակի տիտղոսաբերքին կիսավարժ ձեռագրով գրիչը գրել է գիրքը գնելու մասին, ապա իր ծնողներին հիշելու խնդրանք է ուղղել ընթերցողին. «Ես՝ մեղաոր և անարժան ծառայ Ա[ստուծո]յ այս գիրքն որ առի Վերջի Մարկոսեն այս Յ[իսու]ս Որդիս հալալ վաստակոց իմոց. ամեն: Դարձեալ եթէ որ հանդիպեսցի այս գրքիս յետ իմոյ վաշճանին, եթէ գնեսցէ կամ յիշատակ տայցեն, միով հայր մեղայի յիշեցէք ըզմնօրս իմ և զիս, ո որ յիշեսցէ ի անեղ ատենին ի յանաչառ դատաստան Ա[ստուա]ծ իւր ողորմեսցի. ամեն: Թվականին Ռեճէ-ին, ի գիւղն Վերի»:

Նույն «Յիսուս Որդու» ԳԱՍ օրինակի էջ 331-ին մեկ այլ ուշագրավ հիշատակագրություն կա. նույն ձեռագրով գրիչը թողել է իր ժամանակին գրքի գնի մասին մի փոքր հիշատակ. «Այս է պատճառ գրոյս որ ես՝ տիրացու Մելքունս առի Վերջի տ[է]ր Մարկոսեն մի Յ[իսու]ս Որդի, այս է որ վերոյ գրեալ է **գինն Գ շահի**, թվին Ռեճէ-ին (=1738), սեպտեմբ(ե)րի ԺԸ-ին»: Եթե գրողը նշում է, որ մեկ «Յիսուս Որդի» է գնել, կարելի է ենթադրել, որ վաճառքում այդ գրքերից էլի՝ են եղել, այսինքն՝ իր ժամանակին հայերեն հնատիպ գրքի շուկա է ձևավորված եղել, իսկ տարածողները նախ և առաջ Եվրոպայից Ասիա ճամփորդող առևտրականներն են եղել, և տպագրված հայերեն գրքերը շատ արագ կարո-

դացել են սփռվել աշխարհով մեկ և հասնել հնարավոր սպառողին: Հնատիպ գրքի ձեռագիր հիշատակագրությունները նաև նման եզրահանգումների փաստեր են մատուցում:

Մեր ներկայացրած հիշատակագրությունների բոլոր տարատեսակներն ի վերջո հանգում են երկու հիմնական խմբի: Առաջին խմբում այնպիսիք են, որոնք գրողի վերաբերմունքն են արտահայտում գրքի այս կամ էջի, հատվածի, տողի վերաբերյալ, օրինակ՝ «Հաստ ու բարակն է մեկ գին՝ // Վայ կայ բարակ մանողին», «Շատ բար է աս գիրը»: Երկրորդ խմբում տվյալ հնատիպ գրքի բովանդակության հետ չկապվող հիշատակագրություններն են՝ նվիրատվության, գնելու, հեղինակին կամ հարազատներին հիշելու վերաբերյալ կամ պատմական կարևոր փաստեր, աղոթքներ, մաղթանքներ և այլն:

- 9 -

Ձեռագիր հիշատակագրություններն իբրև վաղաշխարհաբարյան լեզվական շերտ: Ինչպես նշեցինք, ձեռագիր հիշատակագրությունները խիստ կարևոր նյութ են մատուցում հատկապես հայերենի վաղ աշխարհաբարյան շրջանն ուսումնասիրելու համար: Հետաքրքիր է դիտարկել, թե ընդհանուր առմամբ «ռամկախառն գրաբար» (Ղևոնդ Հովնանյանի բնորոշումն է վաղ աշխարհաբարի համար) այս բնագրերում բուն գրաբարյան ձևերից տարբերվող ինչ իրողություններ են հանդիպում: Քննությունն առաջ ենք տանում հայերեն ձեռագիր մատյանների հիշատակարանների Գ-ևորգ Չահուկյանի քննության սկզբունքով՝ առանձնացնելով գրաբարի համեմատ ունեցած հնչյունական, ձևաբանական և այլ շեղումները⁶: Լեզվական փաստերի մասին խոսելիս այստեղ կներկայացնենք միայն ստույգ ընթերցված բառերն ու ձևերը:

Հայերենի վաղաշխարհաբարյան շրջանի առանձնահատկություններից մեկն է այն, որ միևնույն տեսքտում և բնագրում միաժամանակ, կողք-կողքի գործածվում էին գրաբար, աշխարհաբար և բարբառային

⁶ Տե՛ս Գ.Չահուկյան, *Բարբառային երևույթները հայկական հիշատակարաններում*, Եր., 1997: Տե՛ս նաև՝ Լիանա Յովսեփյան, *ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն*, Եր., 1997:

իրողություններ⁷: Այս օրինաչափությունը նկատելի է նաև մեր այս հիշատակագրություններում:

Նրանցում առկա է, նախ, կանոնավոր գրաբար շերտը, որին պատկանող հիշատակագրությունները թե՛ քերականական առանձնահատկություններով և թե՛ ժանրային կառուցվածքով ու ստանդարտ ձևերով շատ նման են ձեռագիր մատյանների հիշատակարաններին ու նաև վիճագրերին, ինչպես՝ «Օվ որ ծախե կամ գողանայ՝ ԳՐ և ԺԸ հայրապետացն նգովեալ լինի և մեր մեղացն պարտախան լիցի. ամէն» (Ոսկան Երևանցի, Քերականութիւն, 1666, Ամստերդամ ՄՄ 902 քվախամար օրինակ), «Աւգնականութեամբ Փրկչին և Տեառն բոլորեցս Յ[խուս]ի Զ[րիստոս]ի, որ է գլուխ ս[ուր]բ եկ[ե]ղ[ե]ցույ, ես՝ բարմատար և եղկելի մեղօք զառածեալս Սիմէոն Տաբևացի, ստացայ ի հալալ յընչից իմոց զԱ[ստուա]ծաշունչ գիրս յիշատակ հոգոյ իմոյ և ծնողացն իմ... յորժամ ընթեռնուք, լի սրտիւ և Ա[ստուա]ծ ողորմի ասեք ինձ՝ բազմամեղիս և իմ՝ առ Զ[րիստո]ս հանգուցեալ ծնողացն. ամէն» («Աստուածաշունչ», Ամստերդամ, 1666, ՄՄ 900) և այլն:

Էլ ավելի շատ հիշատակագրություններում սիոված են գրաբարից տարբերվող ձևեր ու հնչյունական տարբերակներ, որոնցից մի փունջ ներկայացնում ենք ստորև:

ա) **Ուղղագրական շեղումներ:** Հիշատակագրությունների հեղինակների՝ գրագիտությանը տիրապատելու աստիճանին և ժամանակի ընդունված կանոններին համապատասխան այս տեքստերի մեջ են մուծվում ուղղագրական մի շարք շեղումներ, որոնք կարելի է հետևյալ կերպ բնութագրել:

Նախ՝ մեծ խումբ են կազմում սխալագրությունները, որոնք խոսակցական ակունք չունեն և գալիս են զուտ գրիչի իմացությունից, ինչպես՝ **գրեցի, Պողոս, Ավետին, պարգևեայ, գրեցավ, նվաստ, մեղաոր, քագաոր, հողմաին, տղացոց, վաղճան, հավան, պաշտոն, մանավանդ, կենոք, գլխօվս, անսերմ, պարօն, իմաստութիւն, քագավօրութեան** և այլն:

Ուղղագրական շեղումների մի մասում նկատելի է խոսակցական, բարբառային շեշտադրությունը, ինչպես՝ **գգուչ, գուդ, ապրիէ, մուսանգամ, հընչոց** (=ընչից), **հաբեղան, գալեստան, էրէկ, քըհանային**,

⁷ Տե՛ս Ռ.Իշխանյան, *Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն*, Եր., 1978, էջ 17-23:

յունրվար, արդունատրութեան, Խէրիքնագ, յայրապետ, վարդավպետ և այլն:

Բաղաձայնական տեղաշարժերով պայմանավորված ուղղագրական շեղումներ, ինչպես օրինակ՝

- ձայնեղացում՝ ցնջալի, **ղախտ**, **Բարիզ**, **Բսվը**, բարե**քաշտ**, գահանային, զէն **զ**, **զ**(=կ)ոչէ, հա**ջոյ** (հաճոյ), հո**գ**ոեմբեր, յանկարծա **գի**, ման **գ**անն, մար**ղի** (մարտի) և այլն,

- իլացում կամ շնչեղ իլացում՝ Ար**կ**ար, քաղա**կ**ես, բշա**պ**պէ, բա**ն**ապասնաց, **ս**արով, յարգան **ս**ր, պին **ս**ր, տրու **ս**ի, Մար**ք**ար, օ**թ**ախառն և այլն:

Հնչյունափոխական այլ օրինաչափություններ. փ**ռ**րկեա՛, զարդարեա**ի**ն, ը**թ**իւն, ըն**դ**եռնու**կ**, ի բվին հա**ռոց**:

բ) **Հոլովական և խոնարհման համակարգերի շեղումներ**: Գրաբարից տարբերվող, նոր լեզուն ներկայացնող ձևաբանական փաստերը սպասված ակտիվությունը չունեն մեր այս հիշատակագրություններում: Հետաքրքիր է, որ սա վկայում է Գ. Ջահուկյանը ձեռագիր մատյանների հիշատակարանների բարբառային տարբերը քննելիս⁸: Դրա պատճառներից մեկն անշուշտ այն է, որ հիշատակագրությունների հեղինակները հետևել են ընդունված կաղապարներին ու լեզվական արտահայտչամիջոցներին և իրենց խոսվածքը գործածելու մեծ ազատություն, այնուամենայնիվ, իրենց չեն վերապահել:

Մեր քննած բնագրերում հանդիպող աշխարհաբարյան և բարբառային հոլովական ձևերից են՝ եղթօրցն, հոգուն, կողակցուն, գառաքելու, տարու, որդոյն, որդոն, ծովո, իւրեաց, բայածներից՝ տվաւ, տվաց (=տվեց), կու գանագանէ, կը պատկանի, օգնէյ, յիշէյ, քանդէյ, ավրի, էկիմք, գրիմ, նորոզեցիմ, ծնված ըմ, գրում սա, ուտում սա, քոնցէլ իր, ուրբաթ եղեր և այլն: Կախված գրիչի՝ այս կամ այն խոսվածքին պատկանելու հանգամանքից, բնագրերում հանդիպում են -**ում**, **կը** մասնիկներով բայածներ: Ընդհանուր առմամբ նկատելի է հայերենի արևելահայ հատվածին բնորոշ լեզվական առանձնահատկությունների առատությունը մեր քաղած բնագրերում:

Սպասված առատությունը չունեն բարբառային բառերը՝ **ղախտ**, մոգի, դատի(ք), քալանդ, դօստ, ճոթ, մղտեսի, ջառիմայ, յիշունց, սապապ, խօշ-խօշ և այլն: Բարբառային կամ խոսակցական շերտին պետք

⁸ Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 8-9:

է վերագրել բառակազմական կամ ձևաբանական հետևյալ տարբերակները. **նախկի** (փոխ. նախկին), **տառապալ** (տառապեալ), **տրջելով** (տրտնջալով), **տիրացի** (տիրացու), **նահակի** (նահանգի), **բարկինանի** (բարեկենդանի^o), **կողայկինց**, **յիշացեք**, **ատցեք**, **անումնս** և այլն:

Առանձին դիտարկման կարիք ունի հատուկ անունների գործածությունը. այդտեղ հանդիպում են՝

- հայերենում քիչ կիրառված անձնանուններ՝ **Բղբրմսեհ**, **Գւարք**, **Գոգէ**, **Գիւան**, **Գուլխարուչ**, **Եթար**, **Չօրաբաբէլէկ**, **Խոցայդեղ**, **Էրբիանոս**, **Բղբրմսեհ**, **Էսկանդար**, **Խլօ**, **Հայպատ**, **Հրեղին**, **Մուգէլ**, **Յարթէն**, **Նորագ**, **Շահոզ**, **Շահփաշ**, **Սալաբին**, **Սալմինագ**, **Սալօ**, **Սանոխտ**, **Վարդուկի**.

- տեղանունների տառադարձման ուրույն տարբերակներ՝ **Բայբէլոն/Բաբէլոն/Բաբէլոյն**, **Ըստամբօլ**, **Թարեգ**, **Կաղսրվան**, **Կարնի** (=Կարին), **Մօսկով**, **Պախչիսառայ**, **Վէթի**, **Քիշնօվ** և այլն:

Մեծ տարածում ունի բառամիջի ա, ո ձայնավորներին հաջորդող համը -յ- գրությունը՝ տարալարտուց, համալարանեցի, կողալից, Խոցալդեղ, Բալբէլոն, Բաղդալո, պարտալկան, Առաքեալ, արեալն մերձալորսն, յախտեալնս, նրնջեցելոյց և այլն:

Հանդիպում են նաև մի շարք **նորակազմ բառեր**, այնպիսիք, որոնք ստեղծել են այս հիշատակագրությունների հեղինակները և այլ բնագրերում չեն հանդիպում:

ԱՄԷՆԵՐԱՆ (ԱԲ ունի ամեներանեան) - Լսե[լ]ով ամ[ենայն] գրոց սրբոց և բարի ոք խրատից մանապանդ ս[ուր]բ աւետարանականէ, զոր հրամայէ ամեներանն բերանոյն:

ԲԱՐԱՀԱՅՐ - Չայ[ս] արծաթս գործեաց բարահայրն Աբրահամու:

ԼՈՅՍԵՐԱՄ - Ո՛վ լոյսերամ դասք քահանայից և խումբք սարկ[աւա]զ[ա]յց:

ՀՈՎԱՆԱՆԱԼ (հովանի բառից) - Բազուկ քո հովանացէ և աջ քո կնքեցէ:

ՄԵՂԱՄԱԿԱՐԹԵԱԼ (հմմտ. ԱԲ՝ մեղսամակարդ) - Ես՝ ամենա-նուաստ մոլորամիտ և չարայուշ և բոլորովիմբ մեղսամակարթեալ անձին Սիմէօն խաբէբայի և ոչ արեղայի...:

ՆՈՒԻՐԱՆԱԿԱՆ - Աղաչեմ զվայելողքդ թողութի[ւն] շնորհել և առ Տ[Է]ր յիշել զսակաւ գծօղս իրական ձայնին արժանի առնել նուիրանական գլիշեալքս և գլիշողքդ:

ՊԱՀՊԱՆՈՂԱԿ (ԱԲ՝ պահպանողական) - Առաքեալ զպահպանողակ գորութեան աջոյ քո:

ՓԱՍՍՊԱՍԿԵՐ - Ի դրոշմէ խաչի քոյոյ նուն (նոյն^ո) շնորհով մեզ մկրտեցեր և ի փառապատկերի քո:

ՔԱՀԱՆՊԵՏ (փոխ. քահանայատէս) - Յամի տ[եւտ]ն ԼԳ Պետրոս յանդի որ (°) մեծ կացեալ անդ քահանայատէս ամս Է: Պետրոս գնաց ի Հռոմ և նստաւ ծայրագոյն ք[ա]հանայատէս:

գ) **Շարահյուսական աշխարհաբարյան կառույցների** նույնպէս շատ կարելի է հանդիպել.

Աստուած է (=էլ) զօճզ յիշէ,

Յովհաննէս քահանայս ծնված ըմ,

այ՛ խեղճ մոլորեալ Մելքոն,

այս Շարականը կը պատկանի,

նստաւ դախտ սուլթան Մուստաֆայն,

տնով էկիմք Հաշտարխան,

առա Վէթքի տ[է]ր Մարկոսից,

բարի ա յոյժ,

գարդար ցորեն տվեց,

շատ կարօտի բարեւ կանեմ,

կացք բարօվ սիրելիք եղբարք,

խելքս կորաց մոլորաց,

մինչև ցայն ձիւն չէկաւ,

տեսնունք ձեզ հետ,

մին բերան յիշէ,

շատ շարիք գործեց,

տվին Հալիճորա եկեղեցին,

ամէն ինչ կեր (=կայր) կողոպտեց,

որն ուրբաք եղեր և այլն:

Հետաքրքիր է «**քանս**» հնչյունափոխված ձևը՝ որպէս քան + գ < քանց անցման միջանկյալ ձև. «գիտես զամենայն յառաջ քանս լինել նոցայ»:

Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ի (1698թ.) ԳԱԱ օրինակի կազմի դարձերեսի հետևյալ հիշատակագրութիւնը շատ քանով հիշեցնում է ավելի ուշ շրջանի գրական լեզուն. «Սուրբ Էջմիածնայ գիղի ամունն Վարդգէս է, Վաղարշ Արշակունին մեծացրել է և իւր անունն դրել: Ռ-ճՁ մարտի Ը, Մաղաքիա վարդապետ աթոռակալ»: Այս փոքր

հատվածն իսկ ցույց է տալիս, որ 19-րդ դարի կեսերից մեզ հայտնի՝ Արարատյան բարբառի հիմքի վրա նոր ձևավորվող գրական արևելահայերենի նախնական տարբերակն իրականում գործածվել ու նաև գրվել է շատ ավելի վաղ՝ 18-րդ դարի սկզբներին:

Կղեմես Գալանոսի 1645թ. «Քերական և տրամաբանական ներածութիւն» գրքի ՄՄ 206 օրինակի էջ 444-ին պահպանված հետևյալ հատվածը ժամանակի բարբառային հետաքրքիր մի նմուշ է. «Ա[ստուա]ծ գօրութուն արայ Գլուլ Ալիմես և տառապալ իմ յիերկիրն Բաբելոյն ալ ազնայ ինձ և փրկայ զիս փորձութենէ. Յովանէսս»: Հեղինակն այստեղ փորձել է իր տեքստը ձևել գրաբարի վրա (զիս, փորձութենէ), սակայն գրաբարին վատ տիրապետելու պատճառով հիշատակագրությունն ստացվել է բարբառային ձևերի մի խառնուրդ, ուր առկա են այլ>ալ, օ>ա հնչյունական անցումները, ձայնավորի երկբարբառացում՝ ե>իէ (յիերկիրն), բայի հրամայականի բարբառային ձևեր՝ արայ, փրկայ, ազնայ և այլն:

Հետաքրքիր գուգադիպոթյամբ նույն՝ Կղեմես Գալանոսի տպագիր գրքում նկատելի են բաղաձայնական համակարգային տեղաշարժերն արտացոլող փաստեր: Այսպես. «Քերական և տրամաբանական ներածութիւն» գրքի սկզբում բերվում է հայերենի այբուբենը՝ տառերի անվանումներով, որոնց լատիներեն տառադարձման մեջ արտացոլված են հայերենի բաղաձայնական որոշ տեղաշարժեր. հայերեն բ-ի դիմաց գրված է լատ. p, դ-ի դիմաց՝ t, ք - tt, ծ - dz, կ - gh, ճ - g, պ - b, ջ - c, տ - d, փ - pp: Ուշագրավ է նաև հայերեն տառերի անվանումների լատիներեն տառադարձումը՝ բեն-pien, քո-ttuo, կեն-ghien, ո-vo, տիւն-dion և այլն: Թվում է՝ այս աղյուսակի հեղինակը հետևել է ընդհանուր առմամբ ձայնեղացում կամ տեղաշարժ-տեղափոխություն ապրած որևէ բարբառով խոսող հայի արտասանությանը, որոնցում ձայնեղները խլացել են, իսկ խուլերը՝ ձայնեղացել: Նկատելի են նաև երկբարբառացման հետքեր՝ ե>իէ, ո>ուո:

Կարծում ենք՝ հիշատակագրություններում բարբառային տարրերի հետագա ուսումնասիրման ժամանակ, բարբառային փաստերի սովորանալուն գուգահեռ, հնարավոր կլինի նաև դրանց որակական կողմի մասին դատողություններ անել և այդ ճանապարհով փորձել ցույց տալ, թե 300 տարի առաջ բարբառներն ինչ աստիճանի տարբերություններ ունեին ներկայիս վիճակից:

Բոլոր դեպքերում՝ 16-17-րդ դարերի հայերեն լեզվավիճակը ներկայացնող այս բնագրերի քննությունը և նրանցում հանդիպող հնչյունական ու քերականական իրողությունները լրացուցիչ աճգամ գալիս են ապացուցելու, որ վաղ աշխարհաբարձ արտահայտված էր հնչյունական, ձևաբանական անմիօրինակությամբ ու բարբառային տարրերի՝ դեռևս արևմտահայերեն կամ արևելահայերեն լեզվական որակների չվերափոխված մի վիճակով, և որ գրաբարյան, խոսակցական կամ բարբառային ձևերը գրվում ու գոյատևում էին կողք-կողքի:

Ո՞ր գրքերն են ավելի շատ հիշատակագրություններ պարունակում: Նման հստակ օրինաչափություն կարծես չի նկատվում: Դժվար է առանձնացնել կոնկրետ բովանդակության կամ վերնագրերով գրքեր, որոնք մյուս գրքերի համեմատ ավելի շատ են դեպի իրենց ձգել հիշատակներ թողնելու ցանկություն ունեցողներին: Օրինակ, բոլոր ժամանակների համար ամենագործածական գրքի՝ Ավետարանի միայն 1685 թ. հրատարակության 4 տարբեր օրինակներ ենք դիտարկել, սակայն չի կարելի ասել, որ դրանցում խիստ առատ են հիշատակագրությունները: Իսկ ասենք՝ Յովհ. Պոնայի «Ձեռքածութիւն յերկինս» (1705թ.) գրքի ՄՄ 228 օրինակում գրություններ հանդիպում են առատապես: Հիշատակագրություններով հարուստ լինելու միակ պայմանը թերևս տվյալ գրքի շատ գործածական լինելն է, և բնականաբար «Ավետարանները», «Սաղմոսարանները», «Մաշտոց» ժողովածուներն իրենց էջերին ավելի շատ գրություններ են պարունակում:

Անշուշտ, հետաքրքիր կլինի հետևել հիշատակագրությունների «աշխարհագրությանը», այն վայրերին, որտեղ որ գրվել են, կամ որ բնակավայրի մասին հիշատակ են պարունակում, կամ ուր որ հասել են գրքերը: Մեր գրանցած հիշ.-երում հանդիպում են, օրինակ՝ **Էրեվան մայրաքաղաք, Կաղզվան, Վանա երկիր, Կարին, Արզրում, Բաբելոն Բաղդատ տարբերակով, Թավրիզ, Հաշտարխան, Քիչնով, Վեդի (Վէթի), Սասուն, Գողթնեաց գաւառ, Տաթևի վանք, Սուրբ Առաքելոց, Բլուր (գյուղ), Էջմիածին (գյուղ), Աստապատ, Ստամբուլ**, ուր գրքեր են գնվել, **Սուրբ Կարապետ և Ներքի Շենգաւիթ**, որոնց նվիրաբերվել են գրքերը և այլն: Հիշատակագրություններում մի քանի ակնարկ կա նաև հայերի միգրացիաների մասին՝ դեպի Հաշտարխան, Սասունից Քիչնով և այլն:

Կարծես բնական մեկ հարց է ծագում: Ունե՞ն արդյոք ձեռագիր այս հիշատակագրությունները որոշակի գիտական, մշակութային արժեք: Անշուշտ գրքի երկյորդ բաժնում տպագրված հիշ.-երի ընթերցողներն իրենք կարող են կարծիք կազմել, իսկ այս հարցադրմանը մեր պատասխանը հստակ է. որքան էլ դրանք անձնական բնույթի գրություններ լինեն, հաճախ՝ կենցաղային տարրերով լի, միևնույն է, մի քանի առումներով հետաքրքիր են և հնարավորություն են տալիս նախնական եզրակացություններ անել, օրինակ՝ հայ հնատիպ գրքի տարածման արեալի, գրքերի գման կամ նվիրատվության հարցերի մասին, պատմական միջավայրը վերականգնելու փաստեր են պարունակում, հաճախ գրական-գեղարվեստական փորձեր, ոտանավորներ և աղոթքներ են ներկայացնում, որոնք մեկ ուրիշ աղբյուրում հնարավոր չէ գտնել և այդ իմաստով եզակի նմուշներ են, և ի վերջո՝ այս հիշատակագրությունները հարուստ նյութ են մատուցում մեր լեզվի կարևոր մի շրջանի՝ վաղ աշխարհաբարի ուսումնասիրման համար:

Ահա այսպիսին է հայերեն հնատիպ գրքի ձեռագիր հիշատակագրությունների մատուցած արժեքի ոչ ամբողջական շարքը:

Կցանկանայինք հավելել նաև, որ հայ հնատիպ գրքի օրինակներում պահպանված ձեռագիր հիշատակագրություններն ի մի հավաքելու փորձ, որքան մեզ է հայտնի, հայագիտության մեջ չի հանդիպում⁹: Ուստի մի քանի տարվա ջանք ընդգրկող այս աշխատանքին պետք է վերաբերվել այդ դիրքերից: Հեղինակը շնորհակալությամբ կընդունի արված առաջարկություններն ու օգտակար դիտողությունները: Ձեռագիր հիշատակագրություններ հավաքելու կոչ մասնավորապես հնչեցվել

⁹ Այլ լեզուներով հնատիպ գրքերի ձեռագիր հիշ.-երի մասին շատ քիչ գրականություն է մեր ծեռքն ընկել: Եղածները հիմնականում վերաբերում են ժամանակակից գրություններին կամ կոնկրետ հեղինակների հիշատակագրություններին, օրինակ՝ տպագրվել են ռուս մշակույթի գործիչների (Ա. Պուշկին, Մ.Լերմոնտով, Ա.Ախմատովա և այլն) բազմաթիվ գրքերում թողած գրություններն ու ընծայագրերը: Ն.Կառլովն իր գրքում (Надписи на книгах) ներկայացնում և վերլուծում է 20-րդ դարում տպագրված գրքերի էջերին պահպանված հիշատակագրությունները, հրատարկվել է նաև խնդրին նվիրված հոդվածների ժողովածու: Որոշ՝ ոչ բազմաքանակ տվյալներ, այդ թվում՝ անգլերենի վերաբերյալ, կարողացել ենք հայթայթել համացանցում (տես գրականության ցանկը):

է 2010 թ. հոկտեմբեր ամսին Մայր Աթոռ Ս.Էջմիածնում անցկացված՝ Ամստերդամյան հայկական տպարանին նվիրված գիտաժողովի ժամանակ, Մաշտոցյան Մատենադարանի աշխատակից Արմեն Տեր-Ստեփանյանի կողմից: Այստեղ կարող ենք երկրորդել այդ կոչը՝ խնդրելով ըստ հնարավորին սույն գրքի հեղինակին ուղարկել նման տեքստեր, որոնք ամենայն շնորհակալությամբ կընդունենք և անշուշտ կգետնեմք հետագա աշխատանքներում:

Հնատիպ գրքի ձեռագիր հիշատակագրությունների ոչ ընդարձակ մեր այս քննությունից հետո ներկայացվելիք՝ հնատիպ գրքերից բաղված հիշ-երի նմուշները կարող են ուղենիշ լինել դրանց հետագա հավաքման և առավել ամբողջական հրատարակություն պատրաստելու համար:

Հնատիպ գրքի պահպանված և մեր օրերը հասած հարյուրավոր օրինակներում ձեռագիր հիշատակագրություններ շատ ավելի շատ կարելի է գտնել, քան մեր գրանցածն է: Օրինակ՝ ՄՄ-ում պահվում է 1512-1800 թթ. տպագրված գրքերի 2315 օրինակ, որոնցից շատ շատերը ձեռագիր հիշատակներ են կրում, ինչպես՝ թիվ 773, 792, 891, 907, 1461, 1486, 1860 գրքերը և այլն, և այլն: Միայն 1666թ. Ռսկանյան «Աստուածաշնչի» ՄՄ-ում պահպանված 16 օրինակներից ձեռագիր գրություններ ունեն 10-ը (թիվ 306, 900, 901, 902, 904, 906, 907, 910, 1850, 2102): Դրանք բոլորը լրացուցիչ դիտարկման, ապա և քննության մեջ ներառելու կարիք ունեն: Բայց դա, կարծում ենք, խիստ աշխատատար ջանք և տարիների աշխատանք է պահանջում, գուցե՝ դուրս է մեկ անհատի հնարավորությունից: Իսկ այն, ինչ այստեղ ներկայացնում ենք ձեռագիր հիշատակագրություններից, կարծում ենք դրանք էլ կարող են բավարար պատկերացում տալ այս «ժամրի» մասին:

Մի քանի խոսք՝ ներկա ժողովածուի մեջ հիշատակագրությունների ընդգրկման սկզբունքների մասին:

Հնատիպ գրքերի էջերին սփռված գրչավորձերը, հակիրճ բարեմադրանք պարունակող նշումները սակավ դեպքերում ենք այստեղ ներկայացրել, ինչպես՝ «Գերչայփորճի՝ փառք Ա[ստուծոյ], Հօրն յերկնաւորի և սրբոյ] հոգոյն կենարարն, Որդոյն միածնի ամենայկալի. ծառայ] կոչեալ են եղկելի» (Յովհ. Պոռնա, Չեղբածութիւն յերկինս, 1705, ՄՄ 228, էջ չի. 349): Բաց ենք բողել նաև մեկ-երկու բառից կազմված հիշատակագրությունները, ինչպիսիք շատ ու շատ են հանդիպում, օրի-

նակ՝ 1701թ. «Դպրութեան գիրք և տաղարան»-ի ՄՄ 931՝ «Ի նշաստ Ա[ստուծոյ] ծառայ Գրիգորես» (էջ 100), «Ի Ա[ստուծոյ] ծառայ Գասպարես» (էջ 238-239), մեկ այլ գրքում՝ «Տէր Էսլան (°) թի[ւ] ՌՄԼԳ (1784) աղջիկը Էրկու դէկտեմբերի երեք»։ Կամ՝ «[---] փառս Ա[ստուծոյ] տուք ա[ւր]հ[նութիւն] և [---] այս իր թագաւոր» (Սաղմոսարան, Վեներտիկ, 1565-1566) և այլն։

Նպատակահարմար համարեցինք հիշատակագրությունները ներկայացնել ըստ հնատիպ գրքի տպագրման ժամանակագրության՝ տալով տվյալ գրքի օրինակում (կամ օրինակներում, եթե դրանք մի քանիսն են եղել) պահպանված ձեռագիր հիշատակագրությունները։

Հիշատակագրությունից առաջ ներկայացնում ենք համառոտ ծանուցում՝ տվյալ ձեռագրի առանձնահատկության, գրքի էջի և այլ հանգամանքների մասին։

Ձեռագիր հիշատակարաններ հրատարակելիս հայագետները, որպէս կանոն, աշխատում են գրադաշտում ներկայացնել նաև գրիչների և գրչության վայրերի անունները¹⁰։ Որոշակի օբյեկտիվ հանգամանքներից ելնելով, ցավոք, մենք շրջանցել ենք հիշատակագրություններից առաջ այդ կարևոր տվյալները ներկայացնելը. նախ՝ շատ հաճախ հայտնի չէ գրիչների ով լինելը և մանավանդ գրչության վայրը, և հետո՝ ոչ երկարաժամկալ գրություններում ընթերցողը դյուրութեամբ կարող է գտնել գրիչի անունը (եթե այն հայտնի է), որը տրված է թափ տառատեսակով։

Բնագրերն ընթերցելիս պետք է հաշվի առնել հետևյալ դիտարկումները։ Նախ ներկայացնում ենք հնատիպ գրքի վերնագիրը, ապա հաջորդ տողում՝ հրատարակության վայրը-տարեթիվը-գրքի էջերի քանակը, այնուհետև գրքի այն օրինակը, որից քաղել ենք տվյալ հիշատակագրությունը, ինչպէս՝ ՄՄ 1317 - Մաշտոցյան Մատենադարանի հնատիպ գրքերի բաժին, թիվ 1317։

Վերծանված բնագրերում հարցական նշանը (°) ցույց է տալիս, որ տվյալ բառը կամ տառը անստույգ է ընթերցվել, ինչպէս՝ Գուլխարուչին (°), արտապէցուց (°) և այլն։

Աստղանիշ (*) պարունակող բառը ցույց է տալիս, որ հենց այդպէս է գրքում գրված եղել և հենց այդպէս էլ պետք է ընթերցել, օրինակ՝ Պետր Պետրչի*, սնթորայմետականաց*, վարձկոց հմար* և այլն։

¹⁰ Տե՛ս, օրինակ՝ Խաչիկյան Լևոն, *Ճէ դարի հայերեն ձեռագիր հիշատակարանների առաջին հատորը, Աշխատություններ, հտ. Ա*, Երևան 1995, էջ 351-355։

Ուղղանկյուն փակագծերում վերականգնված են բնագրում գեղ-
ված տառերն ու տառակապակցությունները, ինչպես՝ S[է]ր, բ[ա]զում,
տ[ա]ռ[ա]պե[ա], զԱ[ստուա]ծաշունչ ս[ուր]բ տառս և այլն: Նման գեղ-
յուններն ըստ հնարավորին ամբողջական ենք ցույց տվել:

Գծերը [---] ցույց են տալիս, որ մի բանի տառ կամ բառ բնագրում
պակասում են՝ ջնջած, եղծված կամ բողբոջ կտրված լինելու պատճա-
ռով:

Շեղ տառերով ցույց են տրված ուղղագրական շեղումներն ու սխա-
լագրությունները՝ շախտ, ընշեռնուկ, շաբառ շոր և այլն:

Հայերեն տառերով բերված քվականները և հայոց տոմարը փա-
կագծերում ներկայացնում ենք արաբական քվերով:

Կետադրելիս հետևել ենք արդի հիմնական սկզբունքներին՝ տուրք
չտալով, սակայն, հայերենի կետադրության՝ հաճախ անհարկի բար-
դացված կանոններին:

Գործածում ենք գիտական գրականության մեջ վերջին շրջանում
լայն տարածում գտած հետևյալ տերմինները. գրքի կազմ, կազմի ներ-
քին կողմ, դարձերես, պահպանակ, տիտղոսաթերթ, տիտղոսաթերթի
դարձերես, չհ. (չհամարակալված) էջ և այլն:



Հ ի շ ա տ ա կ ա գ Ր ու թ յ ու ն ն ե ր

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ:

Վեներաբիկ, 1565-1566, 512 էջ:

ՍՄ 1317:

Ա

Էջ 52, շագանակագույն մեղան, ոչ վարժ ձեռագիր:

«Քրիստո]ս է իմ Ա[ստուա]ծ և փառաւոր առնեմ զսայ Ա[ստուա]ծ
հար իմոյ և [---]արից զնայ մ[ա]րոյ»:

Բ

Էջ 53, սև մեղան, մեկ այլ՝ առավել վարժ ձեռ.:

«Ա[ստուա]ծ ողորմի **Գոգէ** հոգուն, **Գիլանին** հոգուն, Ա ոչխար
տվաւ»:

Գ

Էջ 152, էջ 53-ի ձեռ.:

«Թիին ՌՄԷ (1708) ապրիլի ԻԶ»:

Դ

Էջ 186, էջ 53-ի ձեռագրով:

«Դու ես Տ[Է]ր մեր, դու ես Քրիստո]ս Փրկիչ մեր, զքեզ ա[ր]ի[ն]են
անձինք մեր մ[ա]րոյ»:

Ե

Էջ 186, էջ 52-ի ձեռագրով:

«Ա[ստուա]ծ ողորմի **Կիրակոսին**, **Խոցայդեղին**, ետուն Ա մոզի
տվաց*»:

Ջ

Էջ 249, էջ 53-ի ձեռագրով:

«Բարձրացաւ եղջիւր իմ, հաստատեցաւ սիրտ իմ S[է]ր: S[է]րամբ հաստով մ[ա]րդ»¹¹:

Է

Էջ 249, էջի միջին մասում, էջ 52-ի ձեռագրով:

«Ա[ստուա]ծ ողորմի **Էրբիանոսին** հոգում, Ա մոզի տվաց»:

Ը

Էջ 319, էջ 53-ի ձեռագրով:

«Խաղաղութե[ան]ց տուաւ Բ[ր]իստոյ, զխաղաղութի[ւն] և զերկնային ողորմութի[ւն]ք պարգևեալ յարարածս քո մ[ա]րդ»:

Թ

Էջ 319, այլ ձեռ., հազիվ նշմարելի:

«Ա[ստուա]ծ ողորմի **Գուլխարուչին** [---] ՋԼ, տվ[աւ] ամ[ենն]»:

ՍԱՂՍՈՍԱՐԱՆ

Վենետիկ, 1587, 335(°) էջ:

ՍՄ 1318:

Ա

Էջ 64-65, սև մեյան, կանոնավոր ձեռ.:

«S[է]ր **Վարդանին** կողայկից **Ազիզին**, **Ալեքսանին**, **Սպամինազին** ամեն»:

¹¹ Հմմտ. Ա Թագաւ., Բ.1. «Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր, եւ բարձրացաւ եղջեր իմ յԱստուած իմ»:

Բ

Էջ 79. Էջ 64-65ի մնան ձեռագրով գրիչը ջնջել է գրքի շարվածքի «բ[ա]զ[ու]ն էին որ տրտրնչեին ընդ իս ի բ[ա]րձ[ա]նց» տողը և դրա փոխարեն ավելացրել «բ[ա]զում էին ոչք ատեին զիս ի տարայարտուց» (Սաղմ. ԼԷ 20): Նման շտկումներ կան նաև էջ 200, 233, 234, 338:

Գ

Էջ 146-147, էջ 64-ի մնան ձեռ.:

«Յիշատակ է Սաղմոսարանս Տ[է]ր **Վարդանին**, իր կողայկից **Ազիզին**, իր որդոյն **Ալեքսանոսին**, **Սալմինագին**. ամէն»:

Դ

Էջ 158, սև մեկան, անվարժ ձեռ.:

«Եղբարք սիրեցեալք, օրհնեսցուք միաբանից **Պրց** (°)»:

Ե

Էջ 226, սև մեկան, մանր վարժ ձեռ.:

«**Աբգար**, **Մարքար** դատիք¹² էրդանք ձեր հրաման րցըրորձը (°)»:

ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ

Նոր Ջուղա, 1641, 705 էջ:

ՍՄ 1332:

Կազմի դարձերեսին, սև մեկան, ընթեռնելի ձեռ.:

«Յիշէ[ց]էք եղկելի **Հօվանէս** արեղայս¹³ Ա[ստուա]ծ է զձեզ յիշէ ի մռտանգամ գալչտտան իւրոյ. ամէն եղիցի, եղիցի»:

¹² *Ղատի* արար. «դատավոր, կառավարիչ»:

¹³ Հավանակա՞ն է այն ենթադրությունը, որ այս հիշատակագրության Հօվանէս Արեղան այս նույն «Հարանց վարք» գրքի տպագիր հիշատակարանում հանդիպող Խաչատուր վրդ. Կեսարացու աշակերտ Տեր Յովանէսը լինի:

Ա

Պահպանակին, սև մկան, ընթեռնելի ձեռ.:

«Լու՛ր, ընթերցաւո, այս արծանի **Մեղքեսերէկ** վարդապետի, զի ես ծաղիկ էի նախկին* բարգաւաճեալ, իբրև այգի վարդ անթառան զիս կարծէի, բայց արդ եղէ հող և փոշի, աղարտեցայ մարմինս այս հանգիստի:

Հազար և հարձր քսան և չորսի (1675) ի հայ թրվական արեթականի ի օգոստոսի ամսոյ եկա[յ] **Կաղաքվան** երկիրն **Վանա[յ]**, եզր ծովուն գերեզման[ն]երն արևելից կուտէ, ի վերայ գերեզմանին մին ճոք ջաղացաբար կա[յ]»:

Բ

Էջ 7 չի., նույն ձեռագրով.:

Անեղին մարմնարան
Բանին բնակարան,
Տաճար տէրունեան,
Չքեզ ունիմ առ տէր բարեխօս:

Գ

Էջ ՄԾԱ, սև քարակ ձեռ.:

«Գրեցի ես՝ ուրարակիւր տ[ի]րացու **Մկրտիչ** Տ[ե]ր **Պետրոսեանց**, յորժամ զայս Հարանց վարքս ընթերցայ. զայս, որ գրեալ էր ի վ[ե]ր[այ] հպարտութե[ան] և անպարտաւանութե[ան], յոյժ հաջոյ թուեցաւ ինձ ի սմին խրատքն. որ ընթեռնու, ի միտ առցէ հպարտութիւն և անպարտաւանութե[ան]է հեղի կացցէ զինքն. փետրվարի 14, 1690-ոյ ամի¹⁴»:

Դ

Էջ ԶԵ-ի դարձերեսին, մոխրագույն այլ ձեռ.:

«Յամի տ[եառ]ն Լ.Դ. Պողոս առաք[եա]լն ի Զ[ր]իստոյս, զոր գտեալ Բառնաբաս, էաձ յԵ[րուսաղէ]մ առ Պետրոս, տուաւ նմա յ[ը]նկերակցութիւն»:

¹⁴ Թվականը գրված է արարատառ:

Յամի տ[եառ]ն ԼՂ Պետրոս յանդի որ (°) մեծ կացեալ անդ քահանայետ* ամս է:

Յամի տ[եառ]ն ԽԵ Պետրոս գնաց ի Հոռն և նստաւ ծայրագոյն ք[ա]յիանայետ:

Անս ԽԷ ամիսս է առորս Ը նահատակեցան ի Հոռն ի Ներոնէ»:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, ՅԻՍՈՒՍ ՈՐԳԻ:

Վենետիկ, 1643, ՇԻԷ (527) էջ:

ՍՄ 121:

Էջ ՇԻ, սև մելանով ձեռ, գրիչը հապկել է տեքստին կից:

«Աստ քեզ գոչիմ աղերսալի,
Լե՛ր բարեխօս Ս[ուր]բ Տիրուհի
Գերազարդ և ցնծալի,
Գերագոյի և բաղձալի,
Աստուածածին ս[ուր]բ անարատ,
Զքեզ աղաչեմ կոյս Տիրամայր»:


ԳԱԱ A-1080:

Էջ ՅՂԵ, սև մելան, փոքր ձեռագիր: Տե՛ս լուսապատճեն 1:

«Ես՝ մեղաւոր **Սիմաս** երեցս, որ ստացալ[յ] գայս Յ[իսու]ս Որդիս ի արդար վաստակոց իմոց և ետու ի ձեռն **Յակոբ** վարդ[ա]յ[ե]լտիին յիշ[ա]տ[ա]կ ինձ և ծնողաց իմոց՝ **Նորագին** և **Շահիաշին**, եղբօրցն՝ **Վարդերին** և **Ա[ստուա]ծատուրին**, քչերցս՝ **Հայպատին** և **Վարդուսկին**, և կենակցին իմոյ՝ **Զարդարին**, որ փոխեալ է առ Բ[ր]իստոյս:

Ով որ հանդիպիք սմա կարդալով կամ օրինակ[ե]լով, միով Հայր մեղա[յ]ի արժան համարեսցիք զվերոյ գրե[ա]լոյ և դուք յիշեալ լիջիք ի Բ[ր]իստոյ[ե] Ա[ստուծո]յ մերոյ. ամեն: Հայր մեր»:

Սրբոցն որանոյ համա գումար-
 և ընտրելոցն հաւա ար-
 ի բերանոյ ձեր գոհա բ ար-
 փառանոր ու թի հասցե անձառ-
 Էրրորո ու թե ըն տուբ ըզ փառ-
 այժմ և յաւ հաւ և ան ըսա ատ-
 ւն մեղաւոր մինաս էրեցս որ ստացա զայս
 յորդա իարդար վաստակոց իմոց և էտու իմե
 ան յակոբ վրդաբն յիշակ իմ և ծնողաց իմոց և
 որակն և շահ փաշին և դորց վարդ էրին անաստ



արին քվերցս հայապատին և վարդ ասկին և կէտա
 կցին իմոց զարդարին որ փոխելէ առքն և վորնա
 արիւցիք ամա կարդալով կմ օրինակել միտմ հայր
 մեղա իւ արժան համարեալիք զվերոյ գրելադ և
 դուք յիշեալ լի էր էրէ այ մերոյ ամէն հայրմե

Լուսապատճեն 1: Ներսէ Շնորհալու «Յիսուս Որդու» Վեներիկի 1643թ. հրատ.
 ԳԱԱ A-1080 օրինակի ՅՂԵ էջի ձեռ. հիշատակագրությունը:

Ա

Էջ ՅԼ, սև մեկան, կանոնավոր ձեռ.:

«Տ[ե]ր Յ[իսու]ս, բարի վայելումն տացես **Աղայեցի Ընթատամի**
որդի յոյժ մեղաստեր տ[ա]ռ[ա]պե[ա]լ **Ռսկանիս:** Գր[ե]ց[ա]լ ՌՃԿԸ
(1719) թվին, նամսեանն մայիսի Ը»:

Բ

Էջ ՆԻԱ, նույն ձեռագրով:

«Առե[ա]լ եղև ՌՃՀ (1721) թվին և ապրիլի Ի, ի վայելումն տ[ա]ռ[ա]պե[ա]լ **Վիրապին**»:

Գ

Էջ ՇԻ, նույն ձեռագրով:

«Առե[ա]լ եղև **Ըստամբոլ** ՌՃԿԷ (1718) թվին մարտի մէկ, ի վա-
յելումն [---]» (2 տող միտումնավոր ջնջած է):

**ԿՂԵՄԵՍ ԳԱԼԱՆՈՍ: ՔԵՐԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ
ՆԵՐԱՃՈՒԹԻՒՆ** (հայ-լատին. լեզ.):

Հռոմ, 1645, 444 էջ:

ՄՄ 204:

Ա

Կազմի դարձերսին, սև մեկան, մանր ձեռ.:

«Ծագեցե[ա]լ շողշողա՛ աստղն լուսաբեր,
Եւ լինի արևու նա աւետաբեր,
Թօթափին մաշախաղթ և մեկնի գիշեր,
Իսկ դու փայլեա՛ց ի մեզ, լո՛յսդ գերիվեր»:

Բ

Պահպանակին, նույն ձևով:

«Ռ-ՆՀԳ (1724) քվին փետրվարի Ի, օրն Եշ[աքքի], մեծ պ[ա]հ[ո]ց
առաջին շաբաթու չափար* էկաւ խանին, քէ **Մօսկովի** ք[ա]զ[աւո]րն
Կանգա (քե՞ Կունգա) մտաւ»:

Գ

Կազմի հակառակ երեսին, նույն ձևով:

«Ռ-ՆՀԳ (1725) քվին, յ[ու]ն[շվ[ա]րի Ը ձին տեսանք, մինչև ցայն
ձին չէկաւ, այսպ[էս] ինձ, ո՛վ եղբ[ա]յր»:

ՄՄ 206:

Ա

Տիաղոսաբերքի դարձերեսին, սև մելան, կանոնավոր ձևով:

Մեղօք աշխար[հ]իս շաղախեալ,
Մեղքոն գրիչս ունայնացեալ,
Ի քաղաքն իմ **Կարնի** կոչեալ,
Ի **Քարեկոն** պանդխտացեալ,
Ի յօրն ամեայ այս չափ կեցեալ,
Թարեզ ք[ա]ղաքան եկե[ա]լ հասեալ:
Ի վայելումն **Մեղքոնին**
Ընծայեցի **Սողոմոնին**,
Յ[իսու]ս տացէ շնոր[հ]ք կարգին,
Ընթեռնելով գրոց բանալին:
Ով ոք իմաստութե[ան] ցանկա[յ]
Եւ ս[ուր]ք գրոց տեղեկանա[յ]
Եւ իմաստնոց դրունս գնա[յ],
Խոնարհու[ք]ի[ւն]ն արհեստ արա:
Եթէ խոնարհու[ք]ի[ւն] ունիս,
Համբակագունից յոյժ գովիս,
Եթէ խոնարհու[ք]ի[ւն] չունիս՝
Հասարակաց ոչ ինչ կոչիս:

Բ

Վերջին՝ 444-րդին հաջորդող չի. էջին, սև մեկան,
ընթեռնելի ձեռն.:

Ես եմ մեղօք պարունակեալ
Լայն ճանապարհն հետևեալ,
Այ խեղճ մոլորեալ **Մեյրոն**:

Գ

Նույն՝ 444-րդ էջին գծված է սև շրջանակ, որի մեջ մի
քանի գրություններ են:

«Ես՝ **Համադանեցի Սիմոնի** որդիս **Քղրմսես**, գրեցի զիր **Քայ-
բելուն**, որ կոչի **Քաղդաստ**: Տառապեալ եմ ի մէջ մեղաց արտապեցուց (°)
նոյն ողորմեսցի. ամէն: Թվին Ռ-ՃԿԶ (1717), յունիսի Ժ-ումն»:

Դ

Նույն՝ 444-րդ էջի շրջանակի մեջ:

«Ես՝ **Համադանցի Էսկանդարի** որդի **Խաչատուրէս** գնեցի քաղա-
կէս **Քաղդաստ**, որ **Քաբէլօն** փռչէ, թւ[ի]ն Ռ-ՃԿԶ, յունիսի Դ-ումն»:

Ե

Նույն 444-րդ էջի շրջանակի մեջ:

«Ա[ստուա]ծ գորութուն արայ **Գլու Ալիմէս** և տառապալ* իմ
յիերկիրն **Քաբելոյն** ալ ազնայ ինձ և փրկայ* զիս փորձութենէ. **Յովա-
նէս**»:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, ՅԻՍՈՒՍ ՈՐԳԻ:

Վենետիկ, 1660, 526 էջ:

ՄՄ 1872:

Ա

Էջ ճՂԳ, սև մեկան, կանոնավոր ձեռն.:

«Գրիչ **Քարնեցի Կարապետ Զօրաբաբէլէկ** (°)»:

Բ

Էջ 32, նույն ձեռագրով:

«Մեղսալի Տ[Է]ր **Կարապետ, Անդրեաս Պողոսի**»:

Գ

Էջ 3ԻԲ, ներքևում, շրջված դիրքով, նույն ձեռագրով:

«Յ[խու]ս Բ[րիստո]ս Փրկիչ օծեալ, Տ[Է]ր **Կարապետ** գրիչ
փշրկեա՛ր»:

ԳԱԱ Ա-423:

Ա

Տիտղոսաբերքին, սև մելան, անվարժ ձեռ.: Տե՛ս լուսա-
պատճեն 2:

«Ես՝ մեղաւոր և անարժան ծառայ Ա[ստուծոյ], այս ինքն [---] որ
առի **Վեթրցի Մարկոսէն** այս Յ[խու]ս Ռրդիս հալալ վաստակոց իմոց.
ամէն: Դարձեալ եթէ որ հանդիպեսցի այս գրքիս յետ իմոյ վաշճանին,
եթէ գնեսցէ կամ յիշատակ տայցեն, միով հայր մեղայիս յիշեսցէ ըզմնօղս
իմ և զիս, ո որ յիշեսցէ՝ ի ահեղ ատենին ի յանաչառ դատաստան
Ա[ստուա]ծ իւր ողորմեսցի. ամէն: Թշկականին Ռ-ՃԶԷ-ին (1738), ի զիւրն
Վեթի»:




Քիչ ծառայութեամբ զարմանալի
Եւստիա
Անբախտ զՅովսէփ Բարսիւսէն լայն յերկրիս
Տառալաւ վարսարանի յիմաց ամեն Եւստիա
Դարձեալ է ի թիւ զարմանալիս
Կիւրա զԴԻԲԻԱ յերկրիս վարձեալ
Ի Երկրէ ԳՅԵԿԵ Կամ յիշատակ
Մայրէն ընդ Տառալաւ
Եւստիա ընդ Եւստիան Լեւոն
Եւստիա յիշատակ Կամ Կամ
Եւստիա յիշատակ Կամ
Մայրէն Եւստիա
Կամ Կամ
Կամ Կամ
Կամ Կամ
Կամ Կամ

Լուսապատճեն 2: Ներսես Ընդհալու «Յիսուս Որդու» Վենետիկի 1660 թ.
հրատ. ԳԱԱ A-423 օրինակի տիտղոսաթերթի հիշատակագրությունը:

Էջ 331, նույն ձեռ: Տե՛ս լուսապատճեն 3:

«Այս է պատճառ գրոյս, որ ես՝ տիրացու **Մելքուն** առի **Վեթրցի** տ[է]ր **Մարկոսէն** մի¹⁵ Յ[իսու]ս Որդի, այս է որ վերոյ գրեալ է գինն Գ-շահի, քվին Ռ-ճՁԷ-ին (1738), սեպտեմբ(ե)տրի ԺԸ-ին:



Լուսապատճեն 3: Ներսէս Շնորհալու «Յիսուս Որդի» Վեներտիկի 1660 թ. հրատ. ԳԱԱ A-423 օրինակի էջ 331-ի հիշատակագրութիւնը:

Էջ 526, նույն՝ ոչ վարժ ձեռ.:

«Այս Յ[իսու]ս Որդին տիրացու **Մելքունին** է, որ առա **Վեթրցի** տ[է]ր **Մարկոսից**, քվին Ռ-ճՁԷ-ին (1738) սեպ.»:

¹⁵ Եթե գրիչը գրում է, որ գնել է «Յիսուս Որդի» գրքի մեկ օրինակ, բնական է ենթադրել, որ վաճառքում եղել են նույն գրքի մաս ա՛յլ օրինակներ:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ: ՅԻՍՈՒՍ ՈՐԳԻ:

Ամստերդամ, 1660-1661, 614 էջ:

ՄՄ 127:

Ա

էջ 197, սև մեկան, ընթեռնելի ձեռն.:

«**Թաթուսի** որդի տիրացու **Սարգիսի** ի քրին այս է [---]¹⁶: Եղբայր **Պողոսին** ի քրին այս է [---]»:

Բ

էջ 604, շագանակագույն այլ ձեռագիր:

«**Յօհաննէս, Պետրոս, Յարթէն, Սաֆար, Բալաբէկ, Համբար, Մա[ր]տիրոս, Յօհանէս, Կարօ**»:

ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՅԻ: ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

Ամստերդամ, 1666, 112 էջ:

ՄՄ 902:

Ա

Կազմի դարձերեսին, սև մեկան, կանոնավոր ձեռն.:

«Ի վայելումն Ս[ուր]բ **Կարապետին**, յի որ ծախէ կամ գողանայ, Գճ և ԺԸ հայրապետացն նզովեալ լինի և մեր մեղացն պարտա/կան լիցի. ամէն: Ի Տէր Յ[իսուս]ի Զ[ր]իստոս]]ի»:

ԱՍՏՈՒՄԾԱՇՈՒՆԶ:

Ամստերդամ, 1666, 1470 էջ:

ՄՄ 900:

Ա

էջ 4 չի., սև նոտրգիր, վարժ ձեռն.:

«Գրեցաւ սակաւ տառս ի վանսն **Տաթևու**, ձեռամբ **Սիմէոն** և եր

¹⁶ Թվերն անընթեռնելի են:

ք[ա]հ[անայ]ի, աղաչեմ յիշել ի Տ[է]ր, ի թուին հայոց հազար Դ և քսան ամին»¹⁷ (1671):

Բ

Էջ 103 (Ա էջակալության), վարը, նույն ձեռն.:

«Ձստացող Ա[ստուա]ծաշունչ ս[ուր]բ տառիս. **Սիմեոն** անարժան և եթ քահանայս, պաղատիմ արտասուօք յիշել առ Տ[է]ր և հայցել զթո- դու[թ]ի[ւն] քազում յանցանաց իմոց. թվ. Ռ-Ն քսան (1671):

Գ

Էջ 467 (Ա էջակալության), 103-րդ էջի ձեռն.:

«Ես՝ զնեղապարտ **Սիմեոն** տրուպ ք[ա]հ[անայ]ս աղաչեմ յիշել յա- ղօթս ձեռ, և Ա[ստուա]ծ՝ զձեզ յիշէ իւրում զալստեանն. ամէն»:

Դ

Էջ 91 (Բ էջակալության), Սաղմոսաց գրքի վերջում, նույն ձեռ., Ա, Բ, Գ գրությունների հեղինակ Սիմեոնի հիշատակագրությունը:

«Շնորհօք ամենակալին Ա[ստուծո]յ՝ Հօր և զթութեամ]բ միածնի Որդոյ ն[ո]ր[ա] և նախախնամութեամ]բ ազատիչ Ս[ուր]բ Հոգւոյն, ես՝ ամենաթշուառ **Սիմեոն** անարժան և եթ ք[ա]հ[անայ]ս, որ եմ **Տաթևացի**, ստացայ զԱ[ստուա]ծաշունչ ս[ուր]բ տառս ի փրկութի[ւն] հոգւոյ իմոյ քազմամեղիս և ծնողաց իմոց, որ հանգուցեալ են առ Տ[է]ր, աղաչեմ զվա- յելոլոքդ թողութի[ւն] շնորհել և առ Տ[է]ր յիշել զսակաւ զծօղս իրական ձայնին արժանի առնել նուիրանական զյիշեալքս և զյիշողքդ. ամէն: Թուին Ռ-ՆԻ ամին (1671): Յունվար Ա»:

¹⁷ Ոսկանյան «Աստուածաշնչի» էջերին կատարած 1671 թվակիր այս գրու- թյունը փաստում է, որ տպագրությունից առնվազն 4-5 տարի անց հրատա- րակված գիրքն Ամստերդամից արդեն հասել և հանգրվանել էր Տաթևի վանքում:

Էջ 365 (Բ էջակալության), նույն ձեռն.:

«Ալգնականութեամբ Փրկչին և Տեառն բոլորեցս Յիսուսի Քրիստոսի, որ է գլուխս սուրբ եկեղեցւոյ, ես՝ քարմատար և եղկելի մեղօք զառածեալս **Միսէոն Տաքևացի**, ստացայ ի հալալ յընչից իմոց զԱստուածաշունչ գիրս յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողացն իմ, հօրն՝ **Մահդասի Ղուկասին** և մօրն՝ **Մարիամին** և եղբարցն՝ **Մանուէլին, Հայրապետին, Գրիգորին** և քերցն՝ **Եղիսաբեթին, Հռիփսիմին** և եղբօր որդւոյն իմոյ երկամբք սնուցելոյ՝ **Գալուստ** դպրին. աղաչեմ յորժամ ընթեռնուք, լի սրտի և Աստուած որորմի ասէք ինձ՝ բազմամեղիս և իմ՝ առ Քրիստոսս հանգուցեալ ծնողացն. ամէն: Հայր մեր»:

Չ

Էջ 568 (Բ էջակալության), նույն ձեռն.:

«Ո՛վ Քրիստոսս ասէր սիրելիք՝ հարք իմ և եղբարք, յորժամ ընթեռնուք զԱստուածաշունչ գիրս, արտասուօք պաղատիմ և աղաչեմ՝ զսակաւ ծրողս **Միսէոն** հանդերձ ծնողիսք իմովք յաղօթս յիշել և առ մեզ առնել ողորմութիւն: Ամէն: Հայր մեր: Ռճ քսան ամին» (1671):

Է

Էջ 718 (Բ էջակալության), Հովհաննու Ավետարանից հետո, նույն ձեռն.:

«Ի բոլին հայոց ՌճԻ ամին, յունչար ամսոյ ԻԱ: Ի կամս ողորմութեան բարերարին Աստուծոյ՝ Հօր և օծելոյ նրին Յիսուսի բանին բարձրելոյ և կենդանարար Սուրբ Հոգւոյն ես՝ ամենամուաստ մոլորամիտ և չարայուշ և բոլորովիմք մեղսամակարթեալ անձին **Միսէոն** խաբերայի և ոչ արեղայի, զի անուամբ եմ միայն և ոչ իրին ճշմարտութեամբ, ստացայ զԱստուածաշունչ գիրս յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողացի իմոց՝ **Ղուկասին, Մարիամին** և եղբարցն՝ **Մանուէլին, Հայրապետին, Գրիգորին** և քուերցն՝ **Եղիսաբեթին, Հռիփսիմին** և ամեհնայն յարեան մերձատրացն կենդանեաց և ննջեցելոց: Վասնորոյ զվայելողքդ աղաչեմ թողութիւն շնորհել յանցանալաց մերոց և առ Քրիստոսս յիշել հանդերձ ծնողիսք իմովք, որք առ Քրիստոսս են հանգուցեալ. ամէն: Հայր մեր»:

ՄԱՇՏՈՑ:

Ամստերդամ, 1667, 315 էջ:

ՄՄ 1162:

Ա

Վերջին՝ չհ. ազատ էջին, սև մեկան, կանոնավոր ձեռ.:

«Գլխովս մեղուցեալ եմ հպարտանալով, բարձրայօն լինելով, մարդոյ վ[երա]յ շարժեալով, հավան չկենալով և խոնարհ չպահելով, ս[ը]րբութեան երկրպագելով, աչօքս արատ հայելով, արտասուք չթափելով, գիրք չհայելով, կնոջ անասնոց խառնակութի[ւն] տեսանելով ցանկանալով, ականջովս չարին ունկն դնելով, բաճպասանաց դատարկութե[ամ]ք դատողութե[ամ]ք, հին և նոր Կոտակարանաց ունկն չդնելով, չարին դնելով, հոռոտեալքս մեղաց հոտ ունելով... բերանօքս քաղցր կերակրի ուտելով, սուտ ասելով, գուր ասելով, հայեոյելով, ազահ ուտելով, բամբասելով, դատելով, դատարկ խօսելով, ազահ խմելով, շատ խօսելով, գիրք սղալ կարդալով, շաղբաղալելով*, յիշունց և քուֆր ածելով, ծայրատել[ով], գրոց համ չառնելով, լեզուս սուտ երկասյրի առնելով, մարդոյ սիրտ խոցելով, տրջելով*»:

ԳԱԱ A-569:

Ա

էջ 50, շրջված գրություն, սև մեկան, անվարժ ձեռ.:

«Ի Ա[ստուծոյ] ծառայ **Կարապետից** հասցէ շատ կարօտիս բարեկանն իմ հայր տէր **Յօաննեսին**, իմ փեսայ **Գեորգին**, իմ քոյր **Սալօին**, տան մեծին»:

ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՍՏ ՀԱՅՈՑ

(հայ և լատին լեզ.):

Ամստերդամ, 1667, 72 էջ:

ՄՄ 1093:

Տխողոսաթերթին հաջորդող չհ. 1-ին ազատ էջին, սև մեկան, ըմբռնելի ձեռ.:

«Հաստատմբ զմինն յերից անձանց՝ զբանն Ա[ստուա]ծ ծնեալ ի
Հօրէ նախքան զյաւիտեան, ի ժամանակի իջեալ յարգանաւ Ա[ստուա]-
ծածնի Մարիամ կուսին, իննամսեայ ժուժկալեալ յարգանաւ այնմ կուսին
և եղև Ա[ստուա]ծն կ[ա]տ[ա]ր[ե]ալ, մարդ կ[ա]տ[ա]ր[ե]ալ հոգով և
մտօք և մարմնով մի անձ և մի դէմ, միատրեալ մի բնութիւն. Ա[ստուա]ծն
մարդացեալ առանց փոխոխման, առանց այլայլութե[ան], անսկզբ յու-
թիւն և անապական ծնունդ, ո[ր]պ[ե]ս ոչ է սկիզբն Ա[ստուա]ծ, քէ նորա և
ոչ վախճան մարդկութե[ան] նորա, զի Յ[իսու]ս Ք[րիստո]ս Հրէկ և
ալսօր նոյն և յաւիտեան»:

Եղձ Վ-30:

Էջ 3 չհ., սև մելան, մանր ձեռ.: Տե՛ս լուսապատճեն 4:

«Յիշեցէք ի մարբափայլ յ[ա]ղ[օ]թս ձեր զլի մեղօք զանարժան
Գալուստ վ[ա]րդ[ա]յ[ե]տն, ո՛վ հայեցող այսմ տեսրիս, ողորմի ասես,
որ և Ա[ստուա]ծ քեզ ողորմի աստ մարմնով, հանդերձե[ա]յն՝ հոգով.
ասէն: Թվ[ի]ն Ռ-ԸԽԶ» (1697):



Ա՛մ գեղք Ա՛հաշունչք և օգտակարք :
 'Ի վարդապետութիւն են . և յանդիման
 նութիւն . և յուղղութիւն . 'ի խրատ
 արդարութե : զի կատարեալ իցի
 մարդն Ա . յ : յամ գործս
 բարութե հաստա
 տեալ :

2. Տիմոթէայ. 3. 16

Յիշեմք ի խորս փայլ շողն Յեղ զի մեղ
 օր հանապա՛հան փայտաստ վարդարմով
 կաշկեցող այսմ անարժան ողորմ
 ասեա որ կամք սեղ ող
 որսի մայ կամք
 ող հանա՛հան
 հոգով ասե
 բնի մայ
 Բն

Ի մի 4 շերցեր զգլուխ յիշատակ

Լուսապատճեն 4: «Վարդապետութիւն Քրիստոնէական ըստ Հայոց» (Ամստեր-
 դան, 1667) գրքի ԵՊՀ Վ-30 օրինակի չի. 3-րդ էջի ձեռագիր հիշատակագրութիւնը:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ:

Ամստերդամ, 1668, 934 էջ:

ՄՄ 961:

Վերջին չհ. ազատ էջին սև մեկան, ընթեռնելի ձեռ.:

«Թիվն 1760 յունիսի 2 ումն, իբր տասն և մին ատուր ժամուն արե-
գակն իստարեցաւ իբրև ամենակարողն յամ[ենայն] չարեաց և փոր-
ձանաց և յամ[ենայն] պատուհասից, զոր զոյ է ի վերայ մեր վ[ա]սն
մեղաց մերոց փրկեալ ազատեցէ. ամէն: Իբր տրուպ չնչին ծ[ա]ռ[ա]
Քասպար պղբէ*»:

ՇԱՐԱԿՆՈՑ:

Ամստերդամ, 1669-1680-ական (°) քք., 464 էջ:

Ազգ. գրադ. 1552:

Ա

էջ 314, կապույտ քանաք, կանոնավոր ձեռ.:

«Այս Շարականը կը պատկանի տէր **Ըստեփան** ք[ա]հ[ա]նայ տէր
Օհանէսին»:

Բ

Վերջին՝ 464-րդ էջին հաջորդող ազատ թերթի վրա մի
քանի գրություններ կան, սև մեկան, անվարժ ձեռ.:

«Ի նշխատ Ա[ստուծոյ] ծառայ տիրացու **Բաղդնից** հասցէ շատ
բարիս իմ աչաց, լրա տիրացու **Ավետին, Գեարքին, Փանոսին, Մանու-
կին, Մարգիսին»:**

Գ

Նույն՝ էջ 464-ի ձեռ.:

«Ի նշխատ Ա[ստուծոյ] ծառայ տիրացու **Ավետին** տիրացու **Փանո-
սից Ներսէսին, Պօղոսին»:**

**ՌՈՐԵՐՏՈՍ ԲԵՒԼԱՐՄԻՆՈՍ,
ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ:**

Լիվոռնո, 1670, 650 էջ:

ՄՄ 1080:

Վերջում կազմի դարձերեսին, սև մելան, կանոնավոր
ծեռ:

«Գր[ե]ց[ա]լ թվին Ռ-ՆԽԲ (1693) ամսոյն մայիսի Դ-ն ի դրան
ս[ուր]բ Առաքելոցն»:

ԺԱՄԱԳԻՐՔ:

Մարսել, 1673, 424 էջ:

ՄՄ 1225

Ա

Վերջին ազատ քերթին, սև մելան, կանոնավոր ձեռ.: Էջի
ծայրի շերտը կտրված լինելու պատճառով տողերի վեր-
ջին բառերից որոշ տառեր բացակայում են:

«Շնորհոք և ողորմութեամբ Տ[եառ]ն մերոյ Յ[իսուս]ի Բ[րիստո-
ս]ի և կամաւ [---] ողորմութեամբ Սրբ[ոյ] Հոգոյն, որ յամ[ենայն] ժամ
բանայ զաչս սրտից մերոց և տայ բարեպէս խորհուրդս լուսաւորս առ ի
պաշտոնս բարեգործութեան և արդշնաւորութեան, լսե[լ]ով ամ[ե-
նայն] գրոց սրբոց և բարի ոք խրատից մանավանդ ս[ուր]բ աւետա-
բանականէ, զոր հրամայէ ամենեւեմն քերանոյն, թէ՛ «զանձեցէք ձեզ
զանձ, որ ոչ գող մերձենայ և ոչ ցեցք ուտիչք ապականէ, ուր զանձք ձեր
են՝ անոք սիրտք ձեր եղիցին»¹⁸, և սրբալզանն ասէ երանիս տալով, թէ՛
«երանի որում իցի զավի Սիռն և ընդանի ի Երուսաղէմ»:

Եւ այլք բազումք այսպիսի վկայութիւն]ս սրբոց հայրց զայս ոք իզ
(*) լուեալ շարժեալ գութ և ի սեր: Այսինքն **Չողայեցի Յակոբջանն և
Էրզրումեցի Կիրեղն՝** ազնիւք և հաւատար[ի]մք գոլով, բարեպաշտք և
որդիք ճշմարտաւեր բարեպաշտից, ըստացան զայս Ատենագիրքս

¹⁸ Յճմտ. Մատթ. 2, 20-21. «Գանձեցէք ձեզ զանձս յերկինս, ուր ոչ ցեց եւ ոչ
ուտի՞՞՞ ապականեն, եւ ո՛չ գողք ական հատանեն եւ գողանան: Զի ուր զանձք
ձեր են, անդ եւ սիրտք ձեր լիցին»:

լիապետ ի պետս հայոց եկեղեցականաց, պաշտոնէից, տօնախիրաց, և որք ի սմայ սաղմոսք և աղօթս նուիրէք, յիշեսջիք լի սրտիս **Ջողայեցի Միրզայ Վելինց** ազնիւ պ[ա]ր[ոն] **Ճատուրն** և իւր որդին [---] պրն **Յակոբջայն**: Նայ և **Էրզրու[մ]եցի** բարեպաշտ պրն **Կիրեղն** և հանգուցեալն ի Ք[րիստո]ս հայրն իւր խօջ[ա] **Յոհաննէսն**, նայ և եղբայրն **Շահոօզն**, որք կան նրնջեալ ի Ք[րիստո]ս խաղաղութ[ամ]ք, գոր **Տ[է]ր Ք[րիստո]ս** միշտ ողորմեսցի. ևս սոյց ոյց* ամ[ենայն] արեան մերձաւորսն ի **Տ[է]ր յիշեալ** [---]:

ԹՎին յահոց* ՌՆԼԳ. (1684) հասցէ **Համարդամ** [---]:»

Բ

Ա հիշատակագրութեան հակառակ երեսին, նույն ձեռ.:

«Ես խընդրեմ յիշեսջիք **Թիպղիզեցի*** գառաֆ պրն **Ամիրի** որդի պրն **Առաքեալն** և զիւր արեալն մերձաւորսն, յամ[ենայն] յիշողք սոցին յիշեալ լիջիք առաջի անմահ գառի Ա[ստուծո]յ անգրաւ յախտեալս. ամէն: Ա[ստուա]ծ ողորմեսցի բարի յիշատակ դնօղաց միշտ. ամէն»:

ՊԱՐԶԱՏՕՍՄԱՐ:

Մարտի, 1673, 80 էջ:

Ազգ. գրադ. 228:

Էջ չի. 67, սև մելան, պարզ ձեռ.:

«ԹՎ[ին] ՌՆԽԴ (1675) ի յունվարի ԻԷ արըն կիրակի. նստաւ ղախտ սուլթան **Մուստաֆայն**»¹⁹:

¹⁹ Տարեթիվն անշուշտ պետք է լինի ՌՆԽԴ (=1695) Մուստաֆա Բ, օսմանյան սուլթան 1695-1703 թթ.:

ՊՕՂՕՍ ՓԻՐՈՍԱԼԻ, ՅԱՂԱԳՍ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՒՏԱՑՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆԻ: Հտ. 1 և 2:

Հոռմ, 1674, 210 էջ:

ԳԱԱ Հովհ. 3216:

Ա

Կազմի վրա, սև մելան, կանոնավոր ձեռ.

«Յ[իսուս]ի Ք[րիստոս]ի ծառայ **Գրիգոր** վ[[ա]րդ[[ա]յ]վ[[ե]տ. յորմէ սիրով)»:

Բ

Էջ վերջին, կազմի դարձերեսին, սև խոշոր և անկանոն ձեռ.:

«Թվ[[ին] Ռ-ՆԼԳ-ումն (1685) մարտին ԻԲ օրն էս՝ **Քանաքեռցի** քալանդ **Ուզեցի Կարապետի** որդի **Մղոսեի Սարգիսի** որդի **Կարապետ**, էս որ էս քարոզ այն [---] առայ **Գաստակեցի** տիրացի* [---], օվ որ կարդայն ողորմեայն. ամեն: Հա[[յ]ր մեր, որ երկինաս»:

ԱՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՈՂՈՒԹԵԱՆ:

Մարտե, 1675, 151 փոքրադիր էջ:

ՍՍ 2066:

Էջ 149, սև մելան, նոտրգիր:

«Յիշ[[ա]տ[[ա]յ]կ է գիրքքս **Տեցի Գաբրիել** վ[[ա]րդապետին և ծնօղացն **Աղամին, Գարիսին**, եղբօրն **Էհոիբարին**: Աղաչեմք հանդիպողացդ յիշեսցիք զհող և զմոխիր ոտից մերոց և ասասցիք Ա[ստուա]ծ ողորմի հոգոց մոցին և դուք օրհնեալ լինիք յԱ[ստուծո]: Թվ[[ին] Ռ-ՆՀ մեկ (1722): Ողջ լերուք ի Ք[րիստո]ս Յ[իսու]ս, կացեք բարով)»:

ՄԱՇՏՈՑ:

Մարտի, 1676, 308 էջ:

ՄՄ 2083:

Էջ 111-112-ի ներքևի վնասված մասը վերականգնվել է նոր բոլորով, որի ազատ հատվածին գրված է սև մեկանով:

«Յիշատակ է տ[է]ր **Վարդանին**, տ[է]ր **Միխիթարին**, պ[ա]ր[ոն] **Ղաթին***»:

ՄՄ 1931:

Ա

Կազմի դարձերեսին, սև մեկան, անվարժ ձեռ., սխալաշատ գրություններ:

«**Վեկիսանն**, որ զարդար ցորեն տվեց [---]»:

Բ

Էջ 7, նույն ձեռ.:

«Անուն տիրացու **Սարքիս**, շատ բար»:

Գ

Էջ 8, նույն ձեռ, ուղղահայաց գրություն:

«Վարդապետ ծառայ **Կարապետ** զարդարեալին»:

Դ

Էջ 9, նույն ձեռ., ուղղահայաց գրություն:

«Գալղ տալ գօմէշ (°)»:

Ե

Էջ 16, վարը, նույն ձեռ.:

«Ճնու[ն]դ **Սանամին** քվին ՌՄ (1751):

Էջ 26, վարը, սև այլ ձևով:

«Ես՝ ձեր ամենեցուն խոն[ա]ր[ի] ծ[ա]ռ[ա]յ տիրացու **Յարութիւն** գրեցի թվ[ի]ն 1277-ին (1828) հոկ. 19»:

Է

Էջ 98, վարը, 26-րդ էջի ձևով:

«Մեր աչաց լռա տ[ե]ր **Գայուստ**, որ փոխեցաւ առ Ա[ստուա]ծ թվին Ռ-ՄՀԳ-ում»²⁰ (1824):

Ը

Էջ 102, վարը, մանր՝ այլ ձևով:

«Ես ԱմենաՎերկիշի նշիրակ **Ղուկաս** յարեղայեւ, ես ի յատան (՞) նշիրակ թվին Ռ-ԲՆԺԲ (1763) յունիսի ԺԲ-ումն, ով որ խանդակիք, մին քերան յիշէ, յիշե[ա]լ լինիս դու առաջի Զ[ր]իստոյսի. ամէն»:

Թ

Էջ 159, վարը, այլ ընթեռնելի ձևով:

«Մեր աչաց լռա տ[ե]ր **Տօլսեւ**, որ փոխեցաւ առ Ա[ստուա]ծ թվին Ռ-ՄՀԳ-ում» (1825):

**ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ: ԳԻՐՔ ՈՐ Ի ՄՆԱՅՈՐԳԱՅՆ ՅԻՍՈՒՍ
ՈՐԳԻՈՅ ԳՐՈՅՆ:**

Կ. Պոլիս, 1677, 96 էջ:

ՄՄ 2119:

Ա

Էջ ԺԸ, մոխրագույն վարժ ձևով:

«Ձեռամբն **Յարութիւն** դարին գրեցաւ գիրս»:

²⁰ Նույն գրութիւնը կրկնվում է նաև էջը 115, 117, 156 և այլն:

Բ

Էջ Ը (Բ էջակալության), նույն ձեռն:

«Հաստ ու բարակն է մեկ գին՝ // Վայ կայ բարակ մանողին»:

Գ

Էջ Թ (Բ էջակալության), նույն ձեռագիրը:

«1194, օգնեյ ինձ»:

ԱՒԵՏԱՐԱՆ:


Վեներտիկ, 1680, 548 էջ:

ԳԱԱ A-725:

Էջ 517, էջի ներքևի մասում, սև անկանոն ձեռն.: Տե՛ս լուսապատճեն 5:

«Յիշատակ է Ս[ուր]բ Ավետարան տ[ե]ր **Գրիգորին** և ծնօղաց **Էլեբանին**»:





Լուսապատճեն 5: Վենետիկի 1680 թ. Ավետարանի ԳԱԱ A-725 օրինակի էջ 517-ի գրությունը:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼՍԵՑԻ: ՀԱՅԵԼԻ
ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ:**

Վենետիկ, 1680, 208 փոքրադիր էջ:
ԳԱԱ A-577:

Ա

Էջ 28, ուղղահայաց դիրքով, սև փոքր ձեռ.: Տե՛ս
լուսապատճեն 6:

Գրքի այն պարբերությանը կից, ուր գրված է՝ «...զգուշ լեռուք յայն-
ցանէ, ով հռոմայեցիք, որք զայլ իմն հաւատ բաց յայնմանէ, գոր մեք

քարոզեցաք ձեզ ուսուցանեն», ահա սրան կից գրված է. «Այ հայելի ստուքե[ան], էս գրում աս չում խե/ւղածն և արունն ուտում աս...»:

Բ

Էջ 62, նույն ձեռագիրը՝ ուղղահայաց գրությամբ:

«Քօնցել իր, էս գրում ժ[ա]մ[անա]կն որ կ[ա]րդիր քօն աշ/դ բ[ա]-
նիր որ յինքնն վկ[ա]յում, քէ հոգի ճշմ[ա]րտութի[ւ]ն որ ի հօրէ ելանէ...»:

ԱՒԵՏԱՐԱՆ:

Վեներիկ, 1685, 450 էջ:

ԵՊՀ Ա-79:

Ա

Էջ 202, Մարկոսի Ավետարանի ավարտին, սև մելան,
մանր կանոնավոր ձեռ.:

«Յիշատակ է ս[ուր]բ Աւետարանս **Արտամետացի Սահակին** և իր կողակից **Մարթային** և ըզհանգուցեալ դուստր **Փերուզին** և այլ իւր նըն-
ջեցելոյց հոգուն, եղաւ այս ս[ուր]բ Աւետարանս **Այնկուսներաց** ս[ուր]բ
Ա[ստուա]ծածին յիշատակ: Ո՛վ ա[ստուա]ծայսէր քահանայք, յորժամ
ընդենու/չ կամ հարևանցի ըզտեսանէք, ասացէք Ք[րիստո]ս Ա[ստուա]ծ,
որ ի անճառելի շնորհին լուսատրել [---] հաւասար **Արտամետացի
Սահակին**. ամէն»:



զուժիս ՚ի մէջ վարդապետութեան զորս
դուք լուսաբոյ առնեն, և խորշեցարուք
ի սոցանէ, քան զի այնպիսիք քի տն
մերում ոչ ծառայեն.

Այսինքն, զգուշ լերուք յայնցանէ ով
հոռմայեցիք որք զայլ իմն հաւատ բաց
յայնմանէ զոր մէք քարողեցաք ձեզ ու
սուցանեն.

Ի. Ի. գլխոջն գաղատացւոց, բայց թե
և մէք և կամ հրեշտակյեկնից աւետա
րանիցէ ձեզ բաց յայնմանէ զոր աւե
տարանեցաք ձեզ, նզովեցեալ լիցի.

Այսինքն, միայն և միայնակ հաւատն
ճշմարիտ այնէ, զոր մէք քարողեցաք
ձեզ, ուստի թէ մէք փոփոխեալք զմիտս
մերս, կամ թէ հրեշտակյերկնից քարո
ղիցէ ձեզ զայլ իմն հաւատ, դատապար
տեցեալ լիցի.

Թե ոտորէ թոյ նառաջնում բանին որ
յաղագո նախատեսութե առէ, և թե
քեա բազմապատիկ և զանազանէ խաբէ
ութիւն, սակայն պարզ է ճշմարտութեն
չնորհ.

Եկեղեցի. Կոստանդնուպոլսեցու «Հայկի ճշմարտութեան»
(Վենետիկ, 1680) գրքի ԳԱԱ Ա-577 օրինակի 28-րդ էջի գրությունը:

Լուսապատճեն 6: Յովի. Կոստանդնուպոլսեցու «Հայկի ճշմարտութեան»
(Վենետիկ, 1680) գրքի ԳԱԱ Ա-577 օրինակի 28-րդ էջի գրությունը:

Վերջին չհ. ազատ էջին, նույն ձեռագիրը:

«Յիշ[ա]տ[ա]կ է ս[ուր]բ Աւետարանս **Արտամեացի Սահակին**, որ էտ իր վաստակօք, ետ ի դուռն **Յայնկոյսներաց** տ[ի]ր[ա]մ[ա]յր Մ[ուր]բ Ա[ստուա]ծածնին անջինջ յիշ[ա]տ[ա]կ:

Արդ՝ ո՛վ լոյսերամ դասք քահանայից և խումբք սարկ[աւա]զ[ա]ց, ի վայելելն ձեր գայս ծաղկափթիք բուրաստանս յիշ[ե]ց[ե]ք ի մաք[ու]ր մա/ւթանս ձեր բարեմիտ և ա[ստուա]ծասէր **Սահակին**, կ[ն]ղ[ա]կից **Մարթային** և դուստր **Փերուզային** և ամ[ենայն] արեանկցացն յիշեցէք և Ա[ստուա]ծ ողորմի ասացէք և ս[ն]ց[ա] յիշ[ե]ղ[ա]ցն Տ[է]ր ողորմեսցի իր միասնգամ գալստեանն և յաւուրն ահեղին. ամէն»:

ՄՄ 931:

Ա

Էջ 121 չհ., սև մեկան, ընթեռնելի ձեռ.:

«Յիշատակ է ս[ուր]բ Աւետարանս պարոն **Մուգելին** և իր կենակից **Հոփսիսին** և իրեանց ծնողացն և իրեանց որդուն **Եղիազարին** և ամ[ենայն] արեան աշու մերձաւորաց նորին հանգուցելոց ի Ք[րիստո]ս. որ վերստին գնեցի ի հալալ ընչիցն իմոց և տուի **Էրևանու Շենգափք** գաղն, գոր Տ[է]ր Ա[ստուա]ծ ի փառս իրում համարեսցէ և յիշ[ա]տ[ա]կն օրհնութեամբ եղիցի և իր օրհնեալ տեսութե[ա]ն երանաշէտ ձայնին արժանիս արասցէ, որ արդարոցսն ասէ, թէ՛ «եկայք օրհնեալք հօր իմոյ» և այլն»:

Ի ՌՄԿԶ-ին (1817) և ի ամսե[ա]յնն մայիսին, որ էտ յիշատակ ս[ուր]բ Աւետարանս տ[է]ր **Ռսկան** քահանային»:

Էջ 202-203 չհ., սև խոշոր այլ ձեռ.:

«Ես՝ **Յովհաննէս** անարժան քահանայս **Սահակեան Ծաղիկեանց**, ծնւած եմ **Կառնի** նահակի* (նահանգի) **Գիկտամու** գեղջ. ձեռնադրեցայ ք[ա]հ[ա]ն[ա]յն[ա]յ **Ներքի Շենգափք** գիւղի համար: Յիշէք ողորմի անարժանիս և որ յիշիք, յիշեալ լիջիք անմահ գառին Աստուծոյ. ամէն:

Գրեցի 1910 ամի 5-ն դեկտեմբեր:

Ես՝ **Յովհաննէս** քահանայս ծնւա՛ծ ըմ 1862 թի մայիս ամսու 5-ին: **Յուստիան Թաղէոսեանի** հետ ձեռնադրւեցայ քահանայ 1908 թվի մայիս ամսու 19-ին Ս.Էջմիածին Ս. Հայկանէ վանքում, ձեռամբ **Մեսրոպ** արք. եպիսկոպոսի, վկայաբանու[թեամ]բ **Սահակ** վարդապետ Ա[ստուա]-ծատուրե[անի]»²¹:

ՍՄ 960:

Ա

Կազմին հաջորդող չի. ազատ էջին (պահպանակին), սև մելան, կանոնավոր ձեռ.:

«Յիշատակ է ս[ուր]բ Ավետարանս տ[ե]ր **Ղազար** բշխանային, հայր **Վիրապին**, մայր **Եթարին**, կողակից **Եղսումի** որդի **Ղահրամանին**, **Քալաշին**, դուստր **Եթարին**, **Սալաբինին**. թվին ՌՄԽ-ին (1791) մարշի Գ-ին գրւեցաւ ի գողն **Բլուր**: Թվին ՌՄԻԸ-ին (1779) **Էլիչի** պարոն տարաւ քաղաքն»:

Բ

Կազմին հաջորդող չի. ազատ էջին, վարը, այլ ձեռ.:

«Թվի ՌՄԿԳ (1815) ես՝ տ[ե]ր **Գրիգորս** ձեռնադրեցայ, գոր և Տ[ե]ր Ա[ստուա]ծ վայելումն տացէ»:

Գ

Էջ 1, խոշոր տատերով:

«Յ[խաւս]ի Զ[րիստոս]ի ծ[ա]ռ[ա]յ տ[ե]ր **Արուսին**»:

²¹ Երևանի վարչական տարածքի մեջ մտնող՝ նախկինում գյուղ համարվող Ներքին Շենգավիթում եկեղեցի չի պահպանվել, բայց ՍՄ 931 օրինակի Ա և Բ հիշատակագրությունները ցույց են տալիս, որ նախախորհրդային շրջանում այնուամենայնիվ այստեղ եկեղեցի կամ գոնե մատուռ է եղել, գյուղի համար քահանա է ձեռնադրվել, այդ գյուղի եկեղեցուն և քահանային 1817 թվականին Ավետարան է նվիրաբերվել, որը պահպանվել է այնտեղ և գրեթե մեկ դար անց՝ 1910թ. նոր քահանան նույն գրքի էջերին իր կողմից գրություն է հավելել և այլն: Այս փաստը հետաքրքրական կարող է լինել Ներքին Շենգավիթի պատմությանը հետաքրքրվողների համար:

Դ

Էջ չհ. 121, Մատթեոսի Ավետարանից հետո ազատ էջին, սև մեկան, այլ ձեռն:

«Թուին ՌՄԿԴ-ին (1815) առնրաւ ս[ուր]ք Ավետարանս. յիշատակ է **Սանտիսի** հոգոյն և իւր Դ որդոյն, և որ այս Աւետարանս կարդայ՝ ասի Արծ* (Աստըուած) ողորմի. Ա[ստուա]ծ իւր ողորմի: Ես՝ **Յօհաննէս** վկայ իմ ձեռօք գրեցի»: Ապա նույն ձեռագրով ոտանավոր՝

Ե

Էջ չհ. 121, նույն ձեռն:

Հողս դարձայ յարգ[ա]նդն հողոյ,
Դարձ[ա]յ ի ծոց մօրս իմոյ,
Յարգանդ մօրս պ[ա]հիմ յետոյ,
Հողոյ իմոյ յետոյ յոյս գոյ»:

Զ

Գրիչը ձեռագրով Ավետարանի գլուխների համառոտ վերնագրեր է դրել:

«Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ», «Վասն մատնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», «Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» և այլն:

Ազգ. գրադ 615:

Ա

Կազմին հաջորդող ազատ չհ. 1 էջին, սև մեկան, փոքր նոտրգիր:

«Յիշատակ է ս[ուր]ք Աւետարանս **Խէրիքնագին**, իւր կողակ[ի]ց **Վարդանին**, որդւն **Հակօին**, **Ապանին**, **Խլօին**, **Մրասին**. Ա[ստուա]ծ լուսաշորհայ* զ[ի]ւր հոգին. ամէն:

Դարձեալ Ա[ստուա]ծ ողորմի ասացէք **Խէրիքնագին**, ի[ւ]ր կ[ո]ղակ[ի]ց **Վարդանին**. ամ[է]ն. որ ստացաւ իւր հալով արդեանց և արդար

վաստակոց իւրոց ի քվին հաւոց* Ռ-ՃՀԶ-ին (1727) ապրելին ժամո[ւ]ն Ը-ին:

Գրեցաւ ձեռամբ սուտանուն տ[է]ր **Մելքետտին**, Ա[ստուա]ծ լ[ու]-ս[աւոր]է գ[ի]ւր հոգին. ամէն»:

Բ

Կազմին հաջորդող ազատ չհ. 2 էջին, սև մեկան, խոշոր ձեռագիր: Տե՛ս լուսապատճեն 7:

«Դարձեալ կրկին անգամ յիշեցէք և Ա[ստուա]ծ ողորմի ասացէք **Խերիքնագին**, իւր ծնօղացն՝ հօր **Մխիթարին** և իւր ծնօղ մօրն Մարգարին և միւս մօրն՝ **Հրեղինին**. ողորմեա՛ Տ[է]ր Ա[ստուա]ծ և մեղաց թողութի[ւն] շնորհեալ, զի ստացաւ զայս ս[ուր]բ և փրկագործ Աւետարանս:

Դարձե[ա]լ Ա[ստուա]ծ ողորմի այս պարոն **Վարդան**, ի միտքերեալ յիշեաց զառաքելու հրամանն, որ կու զանազանէ զառակ սիռնեան, որ մասնակից եղև այս ս[ուր]բ Աւետարանիս վասն իւր կողակցուն յիշատակ, Տ[է]ր Ա[ստուա]ծ ողորմեա՛ և քաղցր աչօք հայեաց և փրկեա՛ ի դժոխաց [---] (մի քանի բառ կտրված է)»:

Գ

Վերջին չհ. էջ 433, շագանակագույն մեկան, լավ ընթեռնելի ձեռ.: Տե՛ս լուսապատճեն 8:

«Յիշատակ է ս[ուր]բ Աւետարանս **Վանքեցի Պողոսին**, **Մարքարիտին**, **Աղամին**, **Միրզին** և այլ իւր ննջեցելոցնս* Ա[ստուա]ծ ողորմի, տւիւն **Հալիձորա** եկեղեցին, Ա[ստուա]ծ իրեաց հոգին լուսաշրէ, արդարոց դասն դասեսցէ. ես՝ անարժան տ[է]ր **Նազարէթս** գրեցի, որ է իմ հայրս **Մելիք Պալասան**, մայրս էր **Մինան**. ով որ կարդա[յ] մէկ բերան ողորմի ասէ, ով որ ողորմի ասէ՝ Ա[ստուա]ծ զինքն օրհնէ: Գրեցաւ ապր/ելի Ի, քվ. Ռ-ՃԿԹ (1720) քիւին»:





Լուսապատճեն 7: 1685 թ. Վենետիկի «Աւետարանի» Ազգ. գրադ. 615 օրինակի չի. 2 էջի ձեռագիր հիշատակագրությունը:

Կարգողս զստեղծութիւնսն Եւ զԵրկր
Եւ զհողմանսն Եւ զօրհանսն Եւ զան
Յարմարսն Եւ զօրհանսն Եւ զան
Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօրհանսն
Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան Եւ զ
օրհանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ
զան Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօր
հանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան
Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօրհանսն
Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան Եւ զ
օրհանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան



Եւ զօրհանսն

Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօրհանսն
Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօր
հանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան
Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօրհանսն
Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօր
հանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան
Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ
զան Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօր
հանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան
Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ
զան Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօր
հանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան

Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօրհանսն
Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօր
հանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան
Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօրհանսն
Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօր
հանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան
Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ
զան Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօր
հանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան
Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ
զան Եւ զօրհանսն Եւ զան Եւ զօր
հանսն Եւ զան Եւ զօրհանսն Եւ զան

Լուսապատճեն 8: 1685 թ. Վենետիկի «Աւետարանի» Ազգ. գրադ. 615 օրինակի չի. 433 էջի ձեռագիր հիշատակագրություներ:

ՆՈՐԱԳՈՅՆ ԾԱՂԻԿ ԶՕՐՈՒԹԵԱՆՑ:

Վենետիկ, 1685, 237 էջ:

ՄՄ 786:

Ա

Պահպանակին, սև մելան. ընթեռնելի ձեռ.:

«Թվ[ի]ն Ռ-ՆՀԶ-ին (1727) դեկտ[ե]մբ[ե]րի ամս[ո]յ այս դառնալցեալ ժամանակիս եկաւ թաթարն բազում չարիս գործեաց մեր յերկրիս, հալիքօքն* կտեց (կտրեց^օ): Սապապ նայ Գ-Ն ղ[ու]ռ[ու]շ ջառիմայ տվինք, շատ էլ չարիք գործեաց»:

Բ

Նույն էջին, նույն ձեռ.:

«Սեփանի ծնունդն թվին Ռ-ՆՀԷ-ին (1725), հոկտեմբերի ԻԸ օրն»:

Գ

Նույն ձեռ. դիմացի չի. էջին:

«Թվին Ռ-ՆՀԳ-ին (1724) օսմանլուն **յերեսան** առաւ: Թվ[ի]ն Ռ-Ն[--] շահ **Թամազն** եկաւ **յերեսանայ**, շատ օսմանլու ջարդեց, **Գառնու** գետի վերէն ԺԲ օր արքատու*²² հանդին նստեց, գնաց իր էլօվն ջրէնդի* հացն կողօպտեց, շատ չարիք գործեց, եկաւ գնաց ապր/ճլի ԺԲ օրն»:

Դ

Չի. 3-րդ էջին, նույն ձեռ.:

«Թվին Ռ-ՆԶ-ին (1731) **Թամազ** խանն **Քաղդատու** վերայ գնաց, առաւ **Քաղդատ**, շատ յերկիր աւերեց, դէռ կու կռի (կռուի^օ):

Թվ[ի]ն Ռ-ՆԶԳ-ին (1735) անիծեալ և չար ժանկ **Թամազ** խան եկաւ **յերեսանայ** վերայ, շատ չարիք գործեց, ամէն ինչ կեր կողոպտեց [--]»:

²² Գուցե մանրատեղանո՞ւն է՝ Արքատու հանդ:

Կրազնի ներքին կողմին, սև մելան, ընթեռնելի ձեռ.:

«Ես՝ տ[է]ր (անունը միտումնավոր ջնջված է), առի էս սուրբ գիրս թվ[իմ] Ռ-ՆՀԳ-ին (1724), դեկտեմբերի Ժ օրն գրեցաւ:

Ռ-ՆՉԳ-ին (1735) շահ **Թամազն** յայառու* վերէն հարյուր հազար սոմանլու ջարթեց, էլաւ գնաց **Հնոստան**, առաւ էկաւ **Տաղըստան**, դեռ կու կրի (կռուի^օ):»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍԱԿՍՈՍԱՅՆ ԴԱԹԻ:

Վենետիկ, 1687, 840 էջ:

ՍՄ 1589:

Ա

Էջ 4, սև մելան, խոշոր ձեռ.:

«Էդիլխանի որդի Գրիգորին»:

Բ

Էջ 4, առաջին սյունակում, սև մելան, դժվարընթեռնելի փոքր ձեռ.:

«Գրեցաւ/ ձեռամբքն **Գևորքին**, որ է որդի տ[է]ր **Ագարիային**, որ է ծ[ա]ռ[ա]յ գայս ընթերցողին»:

Գ

Էջ 4, երկրորդ սյունակում, մույն ձեռ.:

«Ի ծրնունդն **Ստեփանոսին**, որ է որդի **Գրիգորին**, Ռ-ՆԴ(°)Գ (1744°) թվին և յունիսի Ժ և մէկին ատուրն հոգեգալուստ Բ շաբաթին, ի ժամանակըս խյրապետին **Էջմիածնայ** ս[ուր]բ Աթոռին սրբազան **Պապար** կաթողիկոսի: Ի թագաւ/օրութեան **Վէլինամադին**, որ մահ արավ յերկիրըս մինչև Գ տարին, Ա[ստուա]ծ յերկ[ա]ր կեանըս պարբւտ **Վէլինամադին** [---] նորածին մանգանն **Ըստեփանոսին**. ամէն»:

Էջ 7, Առաջարանից հետո, սև մեկան, մանր նոտրգիր:

«**Էսագուպեցի Էդիլխանի** որդի **Գրիգորը** և **Ռվանեսը** տնով էկինք **Հաշտարխան** 1753²³ մայիսի 25-ումն ի քաջավորութեան **Էդիսաբեդին Պետրոյի**²⁴, այլ քվին 1754 **Քարիզումն** ծնաւ/ **Քավլ Պետր Պետրչին**²⁵, տ[է]ր Ա[ստուա]ծն յերկար կենաք և խաղաղութեամբ պահեսցէ. ամէն:

Հայրապետութիւն **Աղէքսանդր** կաթողիկոսին Տ[է]ր Ա[ստուա]ծն ս[ուր]բ Աթոռին հաստատ կենաք պահեսցէ. ամէն»:

Ե

Էջ 7, նույն ձեռ., բայց մի փոքր ավելի խոշոր և քավ:

«Թվին 1755 յունվարի 14-ումն, շրն ուրբաթ եղեր, որ է ծնունդն **Գրիգորի** որդի **Մանուչակին**, որ էր գրոց ուղիղայ (°) Տ[է]ր Ա[ստուա]ծ բարի յիշատակ արասցէ ուղոր զաղսամով* լցի նորածին մանուկն. ամէն»²⁶:

Զ

Էջ 185, ազատ երեսին, խոշոր տառերով:

«**Էսաքուպեցի Էդիլխանի** որդի **Գրիգորին** է, քվին Ռ-ճ-ձ-Թ (1730) դեքտեմբերի մեկին. ամէն»:

Է

Ապա շարունակվում է փոքր տառերով:

«Օվ պարուն **Օվանես**, Տեր Ա[ստուա]ծ քեզ էլ աշկի շնօր[հ]ք և իմաստօթին տացէ. ամէն»:

²³ Դ և Ե հիշատակագրություններում թվականները գրված են արաբատառ:

²⁴ Խոսքն անշուշտ Ելիզավետա կայսրուհու մասին է՝ 1709-1741-1761:

²⁵ Պավել Առաջին Պետրովիչ (1754-1801), Ռուսաստանի կայսր 1796 թ.-ից:

²⁶ Ամբողջ ընտանիքի պատմությունն է գրի առնված՝ հիշատակելով հորը, որդիներին, արտագաղթը Աստրախան, Օվանեսի առաջադիմելը պաշտոնում (պարոն Օվանես) և այլն: Գրիչը Էդիլխանի Գրիգոր և Օվանես որդիներից Գրիգորն է:

Ա

Էջ 93, սև մեկան, ընթեռնելի ձև.:

«Յարգոյ պատիւ սրբաւորոն տ[է]ր Մըկրտիչ Հայրապետեան»:

Բ

Էջ 495, սև մանր ձև.:

